МЕЖДУНАРОДНЫЙ ДВУЯЗЫЧНЫЙ РУССКО-АРМЯНСКИЙ ЕЖЕМЕСЯЧНЫЙ ЖУРНАЛ

Գործարար

ГОРЦАРАР

ИЮЛЬ-СЕНТЯБРЬ № 7-9 (111-113) 2008 г.



московский
международный
кино
фестиваль
19.06–28.06.2008

Победители 30-го Московского международного кинофестиваля Церемония закрытия

19 июня открывался очередной 30 Московский международный кинофестиваль. Были многочисленные гости, участники, представители прессы и зрители на ежегодном кинофоруме. Нынешний фестиваль принес много радостных открытий всем, кто посетил фестивальные площадки. Российское кино начало обретать чувство реальности и уже не остается в стороне от злободневных вопросов жизни страны. В нынешнем году наше кино представлено на крупнейших мировых кинофорумах. Интерес к российскому кино возвращается. Сегодня российское кино занимает достойное место среди других муз.

Цель кинофестиваля – показать лучшие мировые фильмы взыскательным отечественным зрителям, которые устали от засилья пошлости, безвкусия. Свободными личностями, достойными гражданами могут быть лишь просвещенные, культурные люди. Кинематограф не имеет границ, он объединяет мир и способствует взаимопониманию между народами.

28 июня в к/т «Пушкинский» прошла церемония закрытия 30-го юбилейного Московского международного кинофестиваля. Неделя «высокого кино» завершилась. Лучшие из лучших стали лауреатами фестиваля.

Призы 30-го ММКФ:

Главный приз за лучший фильм «Золотой Святой Георгий» – «Проще простого» (Иран), реж. Реза Мир Карими.

«За лучший фильм конкурса» «Перспективы» и сертификат на десять тысяч метров кинопленки – «Кумбия нас связала» (Мексика), реж. Рене У. Виллареаль.

Приз за лучшую режиссерскую работу – Явор Гырдев («Дзифт») (Болгария).

Приз за лучшее исполнение женской роли и часы Carrera y Carrera - Маргарита Буй («Дни и облака») (Италия).

Приз за лучшее исполнение мужской роли и часы Carrera y Carrera – Ричард Дженкинс («Посетитель») (США).

Специальный приз жюри – Марион Лейн за фильм «Простая душа» (Франция).

Приз имени Станиславского «Я верю» за выдающееся актерское мастерство получила французская актриса Изабель Юппер (Франция).

В финале церемонии, 30-го юбилейного московского кинофестиваля президент ММКФ и кинорежиссер Никита Михалков объявил, что специально для Гуса Хиддинка была учреждена новая номинация «За выдающуюся режиссуру в спорте».

Никита Михалков, вызвав на сцену зампредседателя правительства РФ Александра Жукова, вручил ему кинохлопушку с автографами гостей фестиваля с тем, чтобы тот передал приз «за лучшую режиссуру Euro» Гусу Хиддинку.

«Я не знаю, кто принял такое мудрое решение, если вообще можно сказать так, но как футбольный болельщик я с ним на сто процентов согласен, потому что наша команда ехала на этот чемпионат Европы как какая-то провинциальная труппа, имен которой никто не знал, - заявил вице-премьер Александр Жуков. - А сегодня оказалось, что эта команда сплошь состоит из звезд мировой величины. И я думаю, что это под силу только гениальному режиссеру».

Еще один специальный приз Московского международного кинофестиваля присужден главной персоне закрытия форума, знаменитой французской актрисе Изабель Юппер. Ей вручили награду имени Станиславского «Верю» за «покорение вершин актерского мастерства и верность принципам школы Станиславского». 53-летняя звезда интеллектуального кино известна зрителям, прежде всего, по таким картинам как «Вальсирующие», «8 женщин», «Алоиза», «Женское дело» и «Пианистка». Напомним, что на XVII ММКФ Изабель Юппер была удостоена премии за лучшую женскую роль в фильме «Мадам Бовари».

Гран-при фестиваля получила картина «Проще простого» иранского режиссера Резы Мира Карими. Награды в рамках конкурсной программы «Перспективы» удостоена лента «Кумбия нас связала» Рене У. Виллареаля – о молодом человеке, увлеченном кинематографом и снимающем на камеру все, что попадает в его поле зрения. Режиссеру также вручили 10 тысяч метров кинопленки на съемку следующей киноработы.

«Серебряного Георгия» за «лучшую режиссуру» отдали болгарину Явору Гырдеву за фильм «Дзифт». Действие картины разворачивается в течение одной ночи, когда главный герой по кличке Мотылек выходит из тюрьмы. Он отсидел пятнадцать лет по ложному обвинению в убийстве в 1944 году, а по освобождению оказывается в новом мире – тоталитарной Болгарии 60-х годов.

Приз за «лучшую женскую роль» получила Маргарита Буй в итальянско-швейцарском фильме «Дни и облака», а лучшим актером назван Ричард Дженкинс, снявшийся в картине Томаса МакКарти «Посетитель». Специального приза удостоена режиссер фильма «Простая душа» (Франция) Мэрион Лэйн. Награду международной критики и кинопрессы ФИПРЕССИ получила лента Кати Шагаловой «Однажды в провинции».



Главная героиня фильма «Райские птицы» — Оксана АКИНЬШИНА.



Главная героиня фильма «Проще простого» — Хенгамех ГАЖИАНИ.



Кинорежиссер Юрий МАМИНОВ.



Кинорежиссер Андрей СТЕПАНОВ.



Кинорежиссер Роман БАЛАЯН.

ԽՈՐՀՐԴԱՆԻՇ

ԱՐԱՐԱՏ ԼԵՌԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Հոգևոր առումով խորհուրդ նաև գաղտնիք է նշանակում, որը մեր առօրեական մտքին անհաս է, մինչև չխորանանք էության մեջ: Եվ այժմ պիտի փորձեմ ընթերցողին հնարավորինս ներկայացնել Արարատ լեռան խորհուրդը, որն ամեն օր տեսնում ենք, բայց միաժամանակ չենք տեսնում:



Այս անունը, որ դարերով համահունչ է դարձել Հայաստան անվանը, իր ամենահին վկայությունն ունի Աստվածաշունչ մատյանից. «Յոթներորդ ամսի քսանյոթին տապանը նստեց Արարատ լեռան վրա» (Ծննդ 8.4): Աստվածաշնչում ընդհանրապես սա առաջին վկայությունն է որևէ լեռան մասին: Երբ Նոյը ջրհեղեղից հետո Տիրոջից հրաման ստացավ տապանից ցամաք իջնել իր ընտանիքի հետ, նա առաջինը ոտք դրեց Արարատ լեռան լանջին ու այդ հողի վրա հիմնադրեց ու կառուցեց ապագա քաղաքների և գավառների մայրը և անվանեց Նախավան, այսինքն ազգերի հոր և իր ընտանիքի առաջին ավան, որը տասներորդ դարից հետո կոչվել է Նախիջևան:

Այստեղ Նոյը առաջին զոհասեղանը պատրաստեց Աստծուն պատարագ մատուցելու համար: Այս հողում էլ ամփոփվեց այդ արդար ու աստվածավախ այրի մարմինը: Որպես հաստատումն դրա, հայոց պատմիչները փաստում են, որ Նոյի կինը՝ Նոյեմզարան թաղված է հայոց Վասպուրականի նահանգի Մարանդ, կամ Մայրավանդ կոչվող վայրում: Նոյը Արարատ լեռան լանջին հետագայում հիմքը դրեց ու կառուցեց Նախավանը, այսինքն՝ ազգերի հոր և իր ընտանիքի առաջին ավանը:

Նաև, ըստ Սուրբ Գրքի, Աստված Եդեմի դրախտը ստեղծեց և Իր արարած մարդուն՝ Ադամին, այնտեղ դրեց: Աստծո Խոսքը մեզ տեղեկացնում է, որ. «Մի գետ էր բխում Եդեմից, որը բաժանվում էր չորս ճյուղերի, որպեսզի ոռոգեր պարտեզը: Մեկի անունը Փիսոն էր, երկրորդ գետի անունը Գեհոն էր, երրորդ գետի անունը Տիգրիս էր, չորրորդ գետը Եփրատն էր: Տեր Աստվածը Իր ստեղծած մարդուն տեղավորեց բերկրության դրախտում, որպեսզի սա մշակի և պահպանի այն» (Ծննդոց 2.8-17):

Իսկ պատմաբանները մեզ հեշտությամբ կապացուցեն, որ Փիսոնը համանուն հայոց Փիսիսն է, որ նաև Ճորոխ է կոչվել, Գեհոնը մեր Արաքսն է, իսկ մյուս երկուսի անունները այդպես էլ չեն փոխվել (տե՛ս լատինական հինավուրց քարտեզը, որտեղ մեջտեղում Եդեմի դրախտն է իր չորս գետերով, իսկ վերևում և աջ մասում երկու անգամ նշված է Արմենիա անունը):

Քանի որ Աստվածաշունչ մատյանում ամեն բան իր խորհրդաբանական նշանակությունը ունի, ապա այս էլ իմանանք, որ ըստ հայտնի աստվածաբան Փիլոն Եբրայեցու, Եդեմի գետը խորհըրդանշում է Աստծո իմաստությունից բխող բարության առաքինությունը, որը բաժանվելով չորս առանձին գետերի, ոռոգում է ողջ երկիրը, և Փիսոնը խոհականության խորհրդանիշն է, Գեհոնը՝ արիության, Տիգրիսը՝ ողջախոհության, իսկ Եփրատը, կամ Արածանին՝ արդարության (Փիլոն Եբրայեցի, «Ճառք»): Ու քանի որ Արարիչ Աստված կամեցավ որ մեր ազգը մկրտվի Եփրատում, ապա դա նշանակում է, որ Տերը մեզ առաջինը արդարացրեց մեր մեղքերից և Իր անդրանիկը դարձրեց համայն ազգերից, որոնք պետք է դավանեին Աստծո Որդու փրկարար անունը:

Այս էլ իմանանք, որ, ըստ ժամանակակից գիտնականների լուրջ ուսումնասիրությունների, կորուսյալ դրախտը այժմ գտնվում է Վանա լճի հատակում: Ջրհեղեղից հետո Արարիչ Աստված երկրային դրախտը իսպառ ծածկեց մարդկանց աչքերից, ճշմարիտ հավատի աչքեր տվեց, որ երկնային ու անանց դրախտին սևեռենք:

Իսկ Ղևոնդ Ալիշանի պնդմամբ, աշխարհի չորս ամենահինավուրց ազգերից են համարվում հայերը, որոնք, ըստ Աստվածաշնչի, սերում են անմիջապես Նոյի որդի Հաբեթի թոռից՝ Թորգոմից, հրեաները՝ Աբրահամից, որը Նոյից հետո տասներորդն էր, մյուս երկուսն էլ չինացիներն ու հնդիկներն են համարվում: Նա հիմնվել է Հովհաննես Իմաստասեր Սարկավագ վարդապետի հաշվարկներին, ըստ որի, հայոց ազգի տարիքը կազմում է 2492 տարի, Քրիստոսից առաջ ու գումարած ներկա թվարկությունը: Այսինքն մեր ազգի տարիքն է 4500 տարի:

Վերջում ոչ թե կեղծ հայրենասիրական պաթոսով, այլ այժմյան հոգևոր վիճակին համապատասխան մի մտորում ևս ավելացնենք. որ Արարատ լեռը մեր ազգի լինելության մշտամնա ապացույցն է, դա անհերքելի է, բայց որ այն արդեն մեկ դար է գերության մեջ է անօրենների ձեռքում, դա ևս փաստ է: Բայց այստեղ կարևոր է, թե ինչո՞ւ է Տերը թույլ տվել, որ սրբությունը անսուրբների գերության մեջ մնա:

Ըստ իս, մեր ազգը դեռևս հոգևորապես անպատրաստ է Արարատ լեռը հետ ստանալու, քանի որ սրբության հետ անսրբությամբ վարվելով, մենք առավել մեծ պատժի կենթարկվենք: Ասածիս ապացո՞ւյց եք ուզում. խնդրեմ, գնացեք մեր ազգի համար սուրբ վայր համարվող Եղեռնի հուշահամալիր, և դեռ այդ վայրը չմտած, հենց մուտքի մոտ սրբապղծության ամենատարածված սիմվոլը կտեսնեք. մերկանդամ ինչ-որ պարուհու-կնոջ ռեկլամային սիլուետ, որը ձեզ «հրապուրելով» կանչում է գիշերային արկածների ակումբ, որը ճիշտ այդ հուշահամալիրի հարևանությամբ է գտնվում: Իսկ քիչ այն կողմ «Հավանա» կոչվող սրճարան, թե ռեստորան անունով մի շինություն է ծավալվել: Թե ի՞նչ կապ ունի գիշերային զվարճատունն ու Կուբայի մայրաքաղաքը մեր նահատակների հուշահամալիրի հետ, բացարձակապես անհասկանալի է:

Հիմա պատկերացնո՞ւմ եք, թե մեր «տղերքը» ինչեր, ինչեր կսարքեին Արարատի փեշերին, կամ նույնիսկ ձյունաճերմակ գագաթին, եթե այդ սուրբ լեռը մեզ վերադարձվեր: Չէ՞ որ արդեն իսկ օդանավակայանից Հայաստանի մայրաքաղաք մտնելիս մեր ազգի առաջին այցեքարտը հենց դրանք են. գիշերային ակումբներն ու վառ արտահայտված անուններով կազինո-խաղատները:

Այս մտորումները ձեզ մատուցեց
Երուսաղեմի սուրբ Հակոբյանց վարժարանի կրոնի նախկին ուսուցիչ
Մեհրուժան ԲԱԲԱՋԱՆՅԱՆԸ

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՊԱՆԱՔԱՐ

Համադանում հայտնաբերվել է պատմական նշանակություն ունեցող հայկական մի տապանաքար, որը մեր օրերն է հասել Իրանի Ղաջար հարստության թագավորներից Մոհամմադալի շահի միապետության և Սահմանադրական շարժման ժամանակաշրջանից՝ 1912-ի մայիսի 6-ից: Տապանաքարն ունի 104 սմ երկարություն, 58 սմ լայնություն և վրան 11 տողանոց միացյալ տառերով գրություն կա: Այն պատկանում է հայազգի նահատակ Տրդատ Չիջյանին: Հայերեն գրությամբ այս տապանաքարը վերջերս հայտնաբերվել է Իրանի մշակութային ժառանգության կազմակերպության միջոցով՝ Համադանի հայոց առաքելական Ս. Ստեփանոս եկեղեցու մոտակայքում, Մարաստանի պատմական Հեգմաթանե մայրաքաղաքի հետազոտությունների ընթացքում: Տապանաքարի վերին մասը զարդարված է խաչով, որի ձախ կողմում՝ հրացան, իսկ աջ կողմում՝ ատրճանակ է քանդակված: Հաշվի առնելով, որ տապանաքարի թվականը համընկնում է ազգային-հեղափոխական գործիչ Եփրեմ խանի նահատակության թվականին, ենթադրվում է, որ այս տապանաքարը պատկանում է Եփրեմ խանի խմբի մաս կազմող 12 հայ կամավորներից մեկին, որոնք նրա կողքին մասնակցել են Համադան քաղաքից 70 կմ հեռավորությամբ գտնվող Սուրջի գյուղի բերդի գրավման նպատակով մղված կռիվներին:

«Ալիք» օրաթերթ, Թեհրան

Լոռու մարզի Մարգահովիտ գյուղի պատմամշակութային հուշարձանները

(Պատմական ակնարկ հետադարձ հայացքով)

Աղստև գետի հովիտը հազարամյակների ընթացքում մեծ դեր է խաղացել հայ ժողովրդի տնտեսական և մշակութային պատմության ասպարեզում: Այդ մշակույթի ամենավառ օրինակները մինչև օրս պահպանվել են նշված տարածքում: Սակայն հովտի հնագույն անցյալը և այն ներկայացնող հնագիտական հուշարձանները չափազանց թույլ են ուսումնասիրված՝ հատկապես գետի վերին հոսանքում: Վերջին տարիների հետազոտությունները ցույց են տալիս, որ այս տարածքը ևս չափազանց հարուստ է բրոնզ-երկաթեդարյան բնակատեղիներով և դամբարանադաշտերով, ինչպես նաև միջնադարյան բնակավայրերով ու գյուղատեղիներով: Ուրույն հետաքրքրություն ներկայացնող հուշարձանների մեծ մասը, ցավոք, դուրս է մնացել ՀՀ կառավարության կողմից հաստատված Լոռու մարզի հուշարձանների ցուցակից:

Հատկապես կարևորվում է Մարգահովիտ գյուղի տարածքում գտնվող Սարի Սոփ բլրի վրա տեղակայված բնակատեղին, որի մշակութային շերտերը պատկանում են հիմնականում Քուռ-արաքսյան մշակույթի եզրափակիչ փուլերին: Բնակատեղին մեզ է հասել համարյա անխաթար վիճակում: Նրա հարավային կողմում նկատելի են պաշտպանական պարսպաշարի հետքեր, իսկ բլրի գագաթին հանդիպում են խաչքարերի բեկորներ և արաբատառ արձանագրություններ ունեցող տապանաքարեր: Ըստ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի տվյալների՝ բնակատեղիի մակերեսից հավաքված նյութերը՝ խեցանոթների բեկորները և վանակատե առարկաները ցույց են տալիս, որ այդ տարածքը բնակեցվել է առնվազն Ք. ա. 27-26 դարերում: Այս տարի ակնկալվում է պեղումներ իրականացնել վերոհիշյալ տարածքում, որից ձեռք բերված նյութերը մեծ նշանակություն կունենան ոչ միայն հյուսիս-արևելյան Հայաստանի, այլև ողջ տարածաշրջանի, Քուռ-արաքսյան մշակույթի եզրափակիչ փուլերի պատմական օրինաչափությունները լուսաբանելու և ընկալելու գործում, ինչպես նաև կարող են նպաստել Մարգահովիտ համայնքի սահմաններում զբոսաշրջության զարգացմանը:

Նախկին գյուղատեղի Գզրավերը գտնվում է Մարգահովիտից 2 կմ հյուսիս-արևմուտք: Ավերակները համարյա անհետացած են: Ասում են, թե այս ավերակների տեղում առաջ գյուղ է եղել, որն ունեցել է շատ դաժան մի գզիր: Հարկ հավաքելիս, զորակոչի կանչելիս և ուրիշ առիթներով գզիրը այնքան է նեղում գյուղացիներին, որ նրանք ստիպված թողնում են իրենց տունն ու տեղը և հեռանում գյուղից: Ժամանակ անց, երբ գզիրը ծերանում է և զգում, որ մեռնելու օրերը մոտեցել են, որոշում է նորից սարսափ ազդել գյուղացիներին: Կանչում է գյուղի քահանային, հաղորդություն ընդունում և պատվիրում նրան մեռնելուց հետո իրեն թաղելու փոխարեն կախ տալ մի բարձր ծառից: Երբ գզիրը մեռնում է, քահանան կատարում է նրա պատվերը: Մոտակա գյուղերի բնակիչները տեսնելով ծառից կախված գզիրին, ուրախանում են և հավաքվելով նրա դիակի շուրջը՝ պար են բռնում ու երգ ասում: Այդ ժամանակ ծառի մոտով անցնելիս է լինում մովրովը: Նկատելով կախված գզիրին և կարծելով, որ դա գյուղացիների արածն է, հրամայում է այրել գյուղը: Մովրովի հրամանը անմիջապես կատարվում է: Դրանից հետո գյուղատեղի ավերակները կոչվում են Գզրավեր:

Ըստ ՀՀ ԳԱԱ Հնեաբանության ու ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Բորիս Գասպարյանի՝ Գզրավեր բնակատեղին իրենից ներկայացնում է մի բազմաշերտ, սակայն արդեն գործնականում ավերման եզրին հասած հուշարձան, որի տարածքից հավաքված նյութերը պատկանում են թե Քուռ-արաքսյան, թե ուշ բրոնզ-վաղերկաթեդարյան, թե վաղ միջնադարյան և թե զարգացած միջնադարյան փուլերին: Վաղ միջնադարյան համալիրին պատկանող խեցանոթների նմուշների հետ առկա են նաև կղմինդրների բեկորներ, ինչը խոսում է ժամանակին այստեղ առկա եկեղեցական շինության մասին:

Աչաջուր հանդամասը ևս հետաքրքրություն է ներկայացնում, որտեղ հայտնաբերվել են խոշոր չափեր ունեցող սալարկղային ուշ բրոնզ-վաղերկաթեդարյան դամբարաններ, որոնց մի մասը ժամանակին ավիրվել է: Տարածքում առկա են նաև միջնադարյան գյուղատեղիի հետքեր, որտեղ պահպանվել են խաչքարեր և տապանաքարեր:

Այբասան գյուղատեղին գտնվում է ՀՍՍՀ գյուղից մոտ 3 կմ հարավ-արևմուտք, որտեղ հայտնաբերվել են հնագույն նյութական մշակույթի մնացորդներ:

Ըստ մեզ հասած բանավոր ավանդությունների՝ Այբասանը եղել է դպրանոց: Գուգարքի բդեշխ Աշուշայի հրավերով տարածաշրջանում գտնվող Մեսրոպ Մաշտոցը դպրոց է բացել նաև Այբասանում: Այստեղից էլ գալիս է գյուղատեղիի անվան ստուգաբանությունը՝ այբ ասողներ, տառ ասողներ, այբ ասան:

Գյուղատեղիի մակերևույթից հավաքվել են վաղ և ուշ միջնադարյան ժամանակաշրջանի խեցանոթների բեկորներ: Մինչ այժմ կանգուն է վաղ միջնադարյան խաչքարը:

Այբասանում պետք է առանձնացնել հատկապես 19-րդ դարի ջրաղացը, որը գտնվում է գյուղատեղիի արևմտյան եզրին: Այն իրենից ներկայացնում է մեկ աղացքարով ջրաղաց: Ըստ ՀՀ ԳԱԱ Հնեաբանության ու ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող Ս. Հոբոսյանի՝ մինչև 20-րդ դարի 50-ական թվականները ջրաղացներ կային ՀՀ, այդ թվում և Լոռու մարզի գրեթե բոլոր բնակավայրերում, որոնք կոլեկտիվացման, հետագա տեխնիկական վերազինման և այլ պատճառներով դուրս եկան շահագործումից, աստիճանաբար մոռացվեցին ու վերացան: Դարեր գոյատևած մշակութային կարևորագույն մի բնագավառ ի չիք դարձավ, թողնելով աղոտ հուշեր ավերակ շենքերի, առուների, որոշ պարագաների ու բանահյուսական նյութի ձևով: Պահպանված ջրաղացը խիստ համեստ շինություն է, գուցե ամենապարզունակներից մեկը համանման հազարավոր ավերված արտադրական կառույցներից, բայց նրա մեծագույն արժեքը կայանում է նրանում, որ միակն է մարզի տարածքում: Որպես մշակութային եզակի արժեք, խիստ կարևոր է շինության պահպանությունը, մասնակի վերանորոգումն ու սեզոնային գործարկումը:

Այբասան գյուղատեղիից արևմուտք՝ մոտակա բլրի վրա, պահպանվել են նաև ամրոց-բնակատեղիի մնացորդներ, նկատելի են պաշտպանական պարսպաշարի հետքեր:

Ամրոց-բնակատեղիի հետքեր են նշմարվում նաև գյուղի հյուսիսային մասում գտնվող Քարհանք կոչվող բլրի մակերեսին:

Բացի վերոհիշյալ բնակատեղիներից՝ Մարգահովիտի տարածքում եղել են նաև Ջիթհանքեր, Չատոյի քարեր գյուղերը:

Նախկինում գյուղը Թագավորանիստ անունն է կրել՝ մտնելով Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի մեջ: Ցավոք, գյուղի նախկին անվան՝ Թագավորանիստի հետ կապված ընդարձակ գրավոր տեղեկություններ չունենք:

1860-ական թվականներին գյուղում հիմնադրվում է փոստային կայանը, տեղադրվում է փոստային կայանների միջև հեռավորությունը հաստատող սյունը (верстак), որը կանգուն է մինչև այժմ:

Գյուղի հյուսիսային մասում գտնվում է Հայրենական Մեծ Պատերազմում զոհվածների հուշարձանը:

Կանգուն է Ստեփան Շահումյանի կիսանդրին (գործ՝ Նորիկ Անանյանի), որն ընդգրկված է մարզի հուշարձանների ցուցակում:

Ինչպես իր «Հայրենապատում» գրքի երկրորդ հատորում նշել է Սերո Խանզադյանը՝ Մարգահովիտի եկեղեցին կառուցվել է հեթանոսական տաճարի հիմքերի վրա, ընդումին նշելով, ու դա եղել է Անահիտ աստվածուհու տաճարը: Չնայած նրան, որ եկեղեցու պատի վրա կա գրառում՝ «Շինեալ 1872 ամ», եկեղեցու եռանավ բազիլիկ ոճը, պատերի մեջ տեղադրված 5-րդ դարի քարերը (հնեաբանների վկայությամբ), խաչքարերը, հիմք են տալիս ասելու, ու դա վաղ միջնադարյան կառույց է, իսկ 1872 թ.՝ դա վերակառուցման տարեթիվն է: Եկեղեցու թաղակապ ծածկերով պատերը սրբատաշ են, երկլանջ տանիքը կառուցված է տուֆե գլանավոր ծածկասալերով, մուտքը հարավից է, լուսավորվում է հարավային և արևմտյան պատի երկուական և արևելյան պատի 3 ուղղանկյուն բացվածքներով, որոնք վերնամասում ունեն կա-

մարածև ավարտ: Ունի վեցանիստ քարաշեն զանգակաշտարակ, որն ավարտվում է վեղարածև ծածկով: Առջևի մասում նշմարվում են ավելի վաղ ժամանակաշրջանի եկեղեցու կամ մատուռի հետքեր, պահպանվել է մկրտության քարե ավազանը: Ի թիվս այլոց, եկեղեցում քահանայություն է արել նաև Հարություն Վարդապետը, ում գերեզմանը գտնվում է եկեղեցու բակում:

Գյուղը հիմնվել է 10-րդ դարում՝ Գրիգոր Համզե Պահլավունու կողմից: Առաջին գրավոր հիշատակությունը կատարել է պատմաբան, գրող Առաքել Դավրիժեցին, նկարագրելով Պարսկաստանի Շահ-Աբասի արշավանքը Հայաստան. «...Տարագրելիս ոչ թե մեկ կամ երկու գավառ քշեց Պարսկաստան, այլ շատ գավառներ: Եվ սկսեցին Նախիջևանի գավառներից, անցան Եղեգնաձոր, Գեղամա ծովեզերքով, Լոռիով, Համզաչիման գավառը, Ապարանը...»: Այսպիսով՝ 17-րդ դարի սկզբին գյուղն արդեն գավառակենտրոն էր:

Նախնիների պատմությունը կորստի չմատնելու պահանջը, պատմամշակութային հարուստ ժառանգությունը պահպանելու նպատակաուղղվածությունը հիմք հանդիսացան Մարգահովիտ համայնքում հիմնելու երկրագիտական թանգարան, որտեղ պահպանվում են գյուղից և նրա շրջակայքից ձեռք բերված մշակութային արժեքավոր գտածոները: Գյուղի մասին խոսելիս գյուղապետ Սեյրան Անանյանը հպարտությամբ է ներկայացնում թանգարանը. «Համայնքն իր պատմությամբ է համայնք, իսկ թանգարանն էլ այդ պատմության վկայագիրն է»:

Թանգարանում ցուցադրվում են Ք.ա. 3-րդ հազարամյակից մինչև մեր օրերն ընկած բազմաթիվ հետաքրքրիր և յուրօրինակ նմուշներ՝ վաղ և ուշ բրոնզեդարյան խեցեղեններ, գավաթներ, կարասներ, թասեր, դաշույն, ապարանջաններ, քերիչ, փոխանակման միավոր: Այդ ժամանակահատվածի ուշագրավ ցուցանմուշ է ծիսական սափորը՝ (կժռնոս): Հետաքրքիր նմուշ է նաև 5-րդ դարի իշխանական կնիքով մատանին, աղամանը: Այցելուների ուշադրությանն են գրավում 19-րդ դարի խուրջինները, կարպետները, կենցաղային ու տնտեսական իրերը: Թանգարանը սոսկ հին իրերի պահպանման վայր չէ, այնտեղ ի մի է բերված գյուղի պատմությունը: Ցուցավահանակների նկարները պատկերում են գյուղի դիտարժան տեսարանները, առանձին էջերով ներկայացված են նշանավոր համզաչիմանցիները, գյուղի աշխարհահռչակ և անվանի սպորտսմենները, գիտության ու մշակույթի մեծերը, երկրորդ աշխարհամարտում փառքով պսակվածները:

Մարգահովիտը աշխարհին է տվել բազում անվանի մարդիկ, որոնք աչքի են ընկել ամենատարբեր բնագավառներում: Գյուղի ծնունդ են Սովետական Միության հերոս Ավագ Անտինյանը, գնդապետ, դիվիզիայի հրամանատար Զաքար Դերձյանը, Մոսկվայի Պետրովսկու անվան վիրաբուժական ակադեմիայի միկրովիրաբուժության պրոֆեսոր, բժշկական ծառայության գեներալ-մայոր Նորայր Մատինյանը, Հայաստանի գրողների միության Լոռու բաժանմունքի քարտուղար, անվանի գրող Հրաչյա Սառուխանը, այլոք:

Ավագ ԽԱՌԱՏՅԱՆ
Մարգահովիտի երկրագիտական թանգարանի տնօրեն

ՀԱՐՍԱՆԻՔ

(սկիզբը՝ նախորդ համարներում)

Հին Հայաստանում հարսանիքները գրեթե բացառապես տեղի էին ունենում աշնան և ձմռան ամիսներին, երբ դաշտային աշխատանքներն ավարտվում էին և ամբարները լցվում տարվա պաշարով: Տղայի և աղջկա ընտանիքներում հարսանեկան նախապատրաստությունները սկսվում էին հինգշաբթի օրը: Ըստ ավանդույթի, հարսանյաց հանդեսները տևում էին յոթ օր: Յոթ թիվն ուներ կախարդական նշանակություն: 19-րդ դարում յոթ օր հարսանիք անելու ավանդույթը պահպանվում էր միայն ունևոր գերդաստաններում, մյուս խավերի ներկայացուցիչները սահմանափակվում էին 2-3 օրով:

Զևավորվել էին նաև հարսանիք հրավիրելու ավանդական ձևեր: Ամենատարածվածը զուռնա-նաղարայով հրավիրելն էր: Նվագողները բարձրանում էին հարսնատան կտուրը և հրավերի հատուկ եղանակ էին նվագում:

Եթե զուռնա-դհոլ չկար, հրավիրում էին բանավոր խոսքով, միաժամանակ տանտիրոջն առաջարկում մի բաժակ օղի կամ չոր միրգ:

19-րդ դարում քաղաքներում, իսկ 20-րդ դարում արդեն գյուղական բնակավայրերում մեծ տարածում գտավ հրավիրատոմսերով հարսանիք հրավիրելը:

Հարսանիքին նախորդում էին հանդեսի նախնական պատրաստությունները: Կտրվածքի ժամանակ որոշվում էր հարսանքի օրը: Հարևան գյուղից հարս բերելու դեպքում աղջկա կողմը, իմանալով հարսանքի մասնակիցների թիվը, որոշում էր նրանց հյուրընկալողներին: Նախապես ընտրվում էին փեսացուին և հարսնացուին զբաղեցնող մակարներն ու ծաղկոցավորները:

Պսակվող աղջիկներն ու տղաներն ունենում էին հատուկ ընտրված խմբեր, որոնք մասնակցում էին հարսանեկան բոլոր արարողություններին և հանդիսավորությունն էին հաղորդում հանդեսին: Փեսայի շքախմբի անդամները կոչվում էին մակար, թագվորղի, փեսամանուկ, փեսաղբեր, փեսավեր, փեսածու, մանկտիք, մոմկտիք, ինչպես նաև օտար տերմինով՝ ազաբ-ազաբչարի, իսկ հարսնացուի ընկերուհիները կրում էին քուրիկ, ծաղկոց, ծաղկվոր անունները:

Ծաղկվորները, շրջապատելով հարսնացուին, զբաղեցնում էին նրան զրույցներով, երգերով ու պարերով, նրա հետ մասնակցում այն հյուրասիրություններին, որ կատարում էին մերձավոր ազգականները և բարեկամները: Այդ հյուրասիրությունը կրում էր աղջիկ դուրս հանել անունը: Ծաղկվորները պաշտպանում էին հարսնացուի զգեստները, զարդերը ոչ միայն թագվորղիների, այլև մյուս բոլոր պատանիների «հափշտակումներից»:

Մինչև 20-րդ դարի սկիզբը պահպանված էր մակարների առաջնորդ ընտրելու սովորությունը: Հարսանեկան ծիսակատարությունների ժամանակ մակարները մակարապետի գլխավորությամբ ունեին մի շարք պարտականություններ: Նրանք թիկնապահների նման շրջապատում էին թագավորին և պաշտպանում նրան անակնկալներից՝ նրա զգեստները և մանավանդ գլխարկը «հափշտակելուց», որին մեծ եռանդով ձեռնամուխ էին լինում ծաղկոցավորները և բոլոր պատանիները: Ընդ որում, փեսան դիմադրելու կամ ձայն տալու իրավունք չուներ: Նա հնազանդորեն ենթարկվում էր մինչև իսկ այն աղջնակին, որը «կողոպտում» էր իրեն:

Մակարները կազմակերպում էին փեսային լողացնելու, ածիլելու, պսակի շորերը գովքի երգերով հագցնելու և այլ ծեսեր, որ կատարում էին կախարդական-հմայական զանազան ձևերով. հսկում էին փեսայի հայրական տան ներսն ու դուրսը, որպեսզի նրա հակառակորդները կախարդությամբ թագավորի առնական կարողությունը խափանելու որևէ բան չկիրառեին, հարսանեկան արարողությունների ողջ ընթացքում նրանք կազմակերպում էին ծիսային և ժողովրդական խաղեր, մարզական մրցումներ և այլն:

Հարսնացուն դուրս էր գալիս սենյակից հանդերձ հագցնող կնոջ ուղեկցությամբ և ծանր քայլերով մոտենում թագավորին:

Տնից դուրս գալիս հարսնացուի հայրն ու մայրը, նույնիսկ մոտ ազգականները մոտենում էին «մնաս բարով» ասելու և սկսում լաց լինել: Փեսացուի կողմի բարեկամները մխիթարում էին՝ ասելով. «Ի՞նչ եք լալիս,



աղջիկ եք տվել, տղա եք առել»:

Հարսնացուին հանելիս նրա եղբայրը փակում էր տան դուռը կամ դարպասը և չէր թողնում քրոջը տանեին՝ մինչև քավորը մի ընծա չտար: Դուրս գալով աղջկա տնից՝ հարսանեկան թափորն ուղղությունն էր վերցնում դեպի եկեղեցի:

Պսակադրության արարողությունը տարբեր շրջաններում տարբեր ձևով էր ընթանում: Սովորաբար եկեղեցում քահանան խոստովանեցնում էր հարսնացուին ու փեսացուին, ստանում նրանց համաձայնությունը, այնուհետև խորհրդավոր հանգույց անելով՝ նարոտը (կարմիր-սպիտակ կամ կանաչ-կարմիր գույների ոլորած բարակ

➲6

5➲

թելերը, գլխաշորերը) կապում էր նրանց գլխներին:

Երբ քահանան սկսում էր պսակադրությունը, քավորն ու քավորկինը, որպեսզի չարքերը փեսային չկպչեին, իրենց գրպաններում բացված փոքր կողպեքը կամ դանակը փակում էին՝ չմոռանալով, սակայն, վերստին բացել:

Մեկ այլ շրջանում քահանան առանձինառանձին խոստովանեցնում էր հարսին ու թագավորին, խրատներ տալիս նրան: Հատկապես թագավորին պատվիրում էր չորեքմուտք, ուրբաթմուտք և կիրակմուտք երեկոներին, ինչպես նաեւ ամբողջ մեծ պասին հեռու մնալ առագաստից, ինչպես նաև կնոջ ծննդաբերությունից առաջ և հետո քառասունք պահել:

Մեկ այլ վայրում էլ, մինչ քահանան պսակի խորհուրդ էր կատարում, թագավորը որոնում էր թագուհու մատների մեջ մոմի այն կտորը, որը թագուհու ընկերուհիներն էին դրել՝ կամենալով փորձել թագավորի հնարամտությունը: Մոմը գտնելուն պես տալիս էր մակարբաշուն, որպեսզի նա ցույց տա թագուհու ընկերուհիներին և գովի թագավորի խելքն ու շնորհքը, իսկ եթե թագավորը չէր գտնում մոմը, օգնության էր կանչում մակարբաշուն, որ նա մի ճար անի, ապա թե ոչ, փեսան ծաղրի առարկա կդառնար:

Պսակի խորհուրդը կատարելուց հետո քահանան Ավետարանը տալիս էր թագավորին, իսկ խաչը՝ թագուհուն և հարսնևորներին հրավիրում էր խաչհամբույրի:

Զուռնա-դհոլ նվագելով բոլորը շարժվում էին դեպի «հարսնքատուն»՝ հարսի տուն: Քեֆ էին անում, ուտում, խմում, ուրախանում, ապա շարժվում էին թագավորի տուն: Փեսայի տանը ապագա սկեսուրը մի սկուտեղի մեջ երկու լավաշ և մի փոքրիկ ափսեի մեջ կրակ՝ վրան խունկ դրած, պտտեցնում էր տան չորս անկյուններով, ապա դուրս էր գալիս և այդ ամենը երեք անգամ պտտում թագավորի և թագուհու շուրջը: Հետո մի բարձր տեղից ընկույզ կամ կաղին էր շաղ տալիս հարսի գլխին:

Շատ հաճախ, երբ հարսանեկան թափորը մոտենում էր թագավորի տանը, մակարները սկսում էին երգել. «Թագվորի մեր դուրս արի…» երգը:

(շարունակելի)

Տաթևիկ ԱԶԻԶԲԵԿՅԱՆ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ՈՒՏԵՍՏՆԵՐ՝ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՄԲ

Ծեսերն ու ավանդույթները յուրաքանչյուր ժողովրդի հարստությունն են, որոնցով ներկայանում են տվյալ ժողովրդի ազգային առանձնահատկությունները, արտացոլվում են ապրելակերպն ու գաղափարները: Ավանդույթների ու ծեսերի թվին կարելի է դասել նաև ազգային ուտեստներն ու նրանց պատրաստման եղանակները, որոնք նույնպես ժողովրդի ազգային նկարագիրն են ներկայացնում:

Խորվու, փախլավա, փոխինդ, գաթա, տոլմա, թթու, լավաշ ու էլի բազմաթիվ ուտեստներ հայկական ավանդական ճաշատեսակներ են, և կրում են ազգային կենցաղավարության տարրեր: «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» (CARD) հիմնադրամը, որ պատանեկան բազմաթիվ ծրագրերի հեղինակ է, այս անգամ իր ուշադրությունը սևեռել էր ազգային ուտեստների պահպանման խնդրին: Ծրագրի առաջնահերթ խնդիրներից է գյուղական համայնքներում բնակվող պատանիների (12-17 տարեկան) զբաղվածության ապահովումն ու առօրյա կյանքն ավելի հետաքրքրական դարձնելը:



«Ավանդական ուտեստներ» ծրագրի նպատակն է ներկայացնել ու պահպանել հայկական ավանդական կերակրատեսակները: 500 պատանիներ՝ շրջելով իրենց գյուղական համայնքներում և զրուցելով մեծահասակների հետ, հավաքել են հայկական ավանդական ուտեստների ավելի քան հինգ հարյուր բաղադրատոմս: Ավելի ուշ ազգային ուտեստների առանձնահատկություններն ամփոփվեցին «Հայոց ավանդական ուտեստ» պատկերազարդ գրքում, որի շնորհանդեսը կայացավ «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցում: Գրքում ներկայացված են Հայաստանի տասը մարզերի ավանդական կերակրատեսակները: Գիրքը միաժամանակ հաղորդակից է դարձնում նաև հյուրասիրության ավանդական կանոններին: Մինչ գրքի շնորհանդեսը, հանրապետության մարզերից ժամանած պատանիները նախ ներկայացրին իրենց պատրաստած ավանդական կերակրատեսակները, որն ուղեկցվում էր ազգագրական երգ ու պարով, փոքրիկ բեմադրություններով, ու յուրաքանչյուր մարզին հատուկ ծեսերով:

Տասնվեցամյա Ժենյան Արմավիրի մարզի Քարակերտ գյուղից է ու արդեն մի քանի տարի մասնակցում է CARD-ի ծրագրերին: «Ներկայացնելու ենք Արմավիրի մարզի առանձնահատկությունները՝ հովիվի պարն ու հովիվների սիրած կերակրատեսակը՝ խորվուն, որը պատրաստվում է ոչխարի մսից: Քարակերտում այն մատուցում են հաճարի հետ: Կերակրատեսակը ստացել է խորվու անունը, որովհետև միսը խորովում ենք թոնիրում: Հին ժամանակներում խորովելու ընթացքում երիտասարդ չամուսնացած տղաները ներկայացնում էին իրենց ուժն ու հմտությունները, իսկ աղջիկները պարում էին», պատմում է Ժենյան:

«Հուսով եմ, որ կատարած աշխատանքը ոչ միայն հետաքրքրական էր, այլև ուսանելի: Ներկայացրել եք հայկական ավանդույթների, ճաշատեսակների բազմազանությունն ու առանձնահատկությունները, որոնք անկասկած կհետաքրքրեն օտարերկրացիներին: Ծրագիրը հաջողված է և համոզված եմ դեռ երկար ժամանակ կաջակցի հայ պատանիներին», միջոցառման բացման արարողության ժամանակ ասաց ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության գործերի ժամանակավոր հավատարմատար Ջոզեֆ Փենինգթոնը:

Հասմիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2➲

Московский кинофестиваль

«Райские птицы» Романа Балаяна

Московский международный кинофестиваль, не побоюсь некоторой высокопарности, был ознаменован появлением новой ленты маститого режиссёра, позволяющего себе раз в пять лет напоминать обществу о метаморфозах, имеюших место в нас и в обществе в целом. Фильм «Райские птицы» - не исключение. Это не полёты во сне и наяву, хотя опять в главной роли видим мы легенду нашего интеллектуального кино Янковского: мы летаем и... падаем вместе с героями ленты. Вернее, падаем в недавнее советское прошлое страны. Опросы, проведённые культурологами, показывают, что почти 70 % населения страдает ностальгией по советской жизни, где... каждому было по-своему комфортно жить. Фильм-размышление застаёт зрителя врасплох, побуждая осмыслить прожитое и обозначить горизонты дня грядущего.

На пресс-конференции режиссёр фильма был более чем лаконичен. Делая упор на творческое начало в каждом человеке, Балаян, в первую очередь, не отказывает своему верному зрителю в праве на собственное мнение обо всём происходящем. Создаётся впечатление, что он остро нуждается в нём, в этом проявлении индивидуального сознания.

Словно избегая всего коммерческого в кино, Балаян делает ставку на пространственное восприятие времени, в котором мы ещё недавно жили. Но мы продолжаем бытовать. И это не снимает с души ответственности за ближнего, ибо в каждом из нас заложен потециал и нашей порядочности. Жажда полёта - такова доминанта картины, которая 21 июня нашла свою нишу на столь престижном кинофоруме. Сдаётся, верность идее - раскрывать в будничном мире прекрасного пребудет в неистовых страстей режиссёре на все времена. Да, им отснято не так уж много лент, зато каждая запала в душу, осталась растворённой в нас, благодарных зрителях. На днях известный телеведущий Андрей Максимов «пытал» Балаяна на предмет его пристрастий. Стойкий Роман Гургенович отстоял и перед голубым экраном право кино на человечность. Будничную, повседневную, правдивую во всех своих проявлениях. Кинокритики ещё скажут своё слово, но последнее, главное - за зрителем, не предающим своего любимого режиссёра.

Эдуард ПЕТРОСЯН,
обозреватель журнала «Горцарар».

«Թող որ նրա արվեստի ճանապարհը բարի լինի»



Չափազանց պարզ, անիմանալիորեն բարդ է պատանեկան աշխարհը: Գունավոր երազների, գեղեցիկի զգայուն ու անմիջական աշխարհ:

Այդպիսի ինքնատիպ ու նրբին աշխարհում է ապրում Վանաձորի Ստեփան Աղաջանյանի անվան գեղարվեստի դպրոցի շրջանավարտ Աստղիկ Մելքոնյանը: Ինքն է ու իր ոսկե աշխարհը՝ գեղանկարչությունը, արվեստը:



«Ցեղասպանություն»



«Ջութակահարուհին»

Իր տարիքի համար լրջմիտ է, յուրաքանչյուր բառը մտովի վերլուծող, ծանր ու թեթև անող:

Խիստ տպավորվող է: Ունի տեսողական անուրանալի հիշողություն, վերարտադրելու մեծ կարողություն, պատկերավոր մտածողություն:

Այսպիսի նկարագրի տեր աղջնակին, աշխարհին ուղղված նրա հայացքներին՝ գեղագիտական թե կենսափիլիսոփայական, բնորոշ են երևույթների ներթափանցման, ներկայացման հատկություններ, գեղեցիկի հավերժական զգացումներ:

Իր պատանեկան անկեղծ էությունն ու անխառն զգացմունքներն է բացահայտում Աստղիկը իր աշխատանքներում: Դրանցում ալիքվում են վառվռուն գույները, և թվում է, թե համր ստեղծագործություններից յուրաքանչյուրը պատանեկան լեզվով իր հեքիաթն է պատմում շրջապատի մարդկանց, հայրենի բնության ու իր հայրենիքի պատմության մասին:



«Մեր համայնքը»



«Կնոջ կիսանդրի» (գծանկար)



«Ֆլորա»





«Իմ եկեղեցին»



«Բնության գրկում»

Նկարները՝ «Ցեղասպանություն», «Բնության գրկում», «Մեր համայնքը», «Իմ եկեղեցին», քանդակները՝ «Ջութակահարուհին», «Կնոջ կիսանդրի»-ն, իրենց թեմատիկ բազմազանությամբ ու բովանդակության խորությամբ են աչքի ընկնում առաջին իսկ հայացքից:

Աստղիկի մասին գրելիս հիշեցի այն աղջնակին, ում բանաստեղծական մի տողը հայտնի դարձրեց նրան աշխարհում՝

«Ես ամեն օր փակում եմ աշխարհին իմ կոպերով ...»
Ճիշտ Աստղիկի տարիքին, ճիշտ նրա նման...
Ինչպիսին կլինի վաղվա օրը և նրա ճանապարհը...
Թող որ նրա արվեստի ճանապարհը բարի լինի:

ԼևոՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
լուսանկարները Արմեն ՌԱՖԱՅԵԼՅԱՆԻ

«Հոբելյանական 50-րդը»

Կեսդարյա կենսագրություն և գեղեցիկ ավանդույթներ ունեցող Վանաձորի Ստեփան Աղաջանյանի անվան գեղարվեստի դպրոցը, ավանդույթի համաձայն, ուսումնական տարին եզրափակեց հոբելյանական՝ 50-րդ հաշվետու ցուցահանդեսի բացումով, ուր ցուցադրված էր 21 շրջանավարտների դիպլոմային և սաների քննական հաշվետու աշխատանքներ: Իսկ խորագիրը՝ «Իմ նախնյաց երկիրը», ցույց է տալիս, որ մենք բոլոր ժամանակներում վերադառնում ենք մեր ակունքներին, մեր կենսափիլիսոփայությանը:



Էմմա Ոսկանյանը, դպրոցի տնօրեն՝ Արսեն Ռաֆայելյանը, Մարիամ Ամիրխանյանը, ուսմասվար՝ Զեմֆիրա Մոսինյանը, Սարգիս Սարգսյանը մի խումբ շրջանավարտների հետ

Մանկական մաքրամաքուր երեվակայությամբ ստեղծված գործերը իրենց ուշագրավությամբ ներկաներին ստիպում էին բավականին երկար կանգնել Աշոտ Ժամհարյանի, Միեր Կուրղինյանի, Լիլիթ Սարգսյանի, Լիաննա Քոչինյանի նկարների առջև:

Իսկ շրջանավարտներ Աստղիկ Մելքոնյանի, Ցոլակ Ղուկասյանի, Արման Ալեքսանյանի, Մարիամ Սինդոյանի դիպլոմային աշխատանքները ցույց են տալիս, որ նրանց ձեռքի հմտությունն ու թեմատիկ ընտրությունը արդեն տարբերվում են մանկական պարզությունից:

Քաղաքապետ Սամվել Դարբինյանի և քաղաքապետարանի կրթության և մշակույթի բաժնի անունից բաժնի առաջատար մասնագետ Լ. Զարգարյանը, շնորհակալագրեր հանձնելով դպրոցի բազմավաստակ մանկավարժներ Մարիամ Ամիրխանյանին, Զեմֆիրա Մոսինյանին և Էմմա Ոսկանյանին, նշեց. «Ստեփան Աղաջանյանի անունը կրող ձեր դպրոցը ստեղծման օրից իրոք եղել է գեղարվեստի ավանդները պահպանող-խթանող կրթամշակութային լավագույն օջախներից: Ձեր՝ գեղարվեստի նվիրյալներիդ շնորհիվ սերունդներ են կրթվել և ինքնահաստատվել, ստացել գեղագիտական դաստիարակություն: Այսօր էլ, չնայած բազում դժվարությունների, դուք ձեր մեջ ուժ եք գտնում աննմանցորդ աշխատելու, կրթելու, դաստիարակելու և սերմանելու սերը՝ առ արվեստն ու գեղեցիկը: Ի սրտե շնորհավորելով ձեզ դպրոցի հիմնադրման 50-ամյակի կապակցությամբ՝ շնորհակալություն եմ հայտնում աննմանցորդ նվիրումի համար, մաղթում առողջություն, նորանոր հաջողություններ ձեր դժվարին և պատվավոր աշխատանքում»:

Արսեն ՌԱՖԱՅԵԼՅԱՆ
գեղարվեստի դպրոցի տնօրեն

Գրական-երաժշտական ցերեկույթ նվիրված Ռուսաստանի օրվան



Հայ-ռուսական վաղեմի բարեկամության և սերտ կապերի ևս մեկ ապացույց էր Լոռու մարզային կենտրոնական գրադարանում Ռուսաստանի օրվան նվիրված գրական-երաժշտական ցերեկույթը, որ կազմակերպել էին «Ռուսական մշակույթի օջախ» հկ-ն՝ նախագահ Ջուլիետա Կուզինան և «Ռոսիա» հկ-ի Վանաձորի մասնաճյուղը՝ ղեկավար Նատալիա Այդինյան:

Միջոցառմանը առավել շուք հաղորդեցին Գրիբոյեդովի անվան թիվ 11 դպրոցի երգչախումբն (ղեկավար Էմիլիա Ավետիքյան) ու Պուշկինի անվան թիվ 4 դպրոցի սամունքողները:

Հնչեցին Ռուսաստանին նվիրված երգեր, ոգեշունչ բանաստեղծություններ: Իրենց հուզումնալի կատարումներով ներկաներին մեծ բավականություն պատճառեցին երգչախմբի մենակատարներ Ռուզաննա և Լիանա Մխիթարյանները, Աննա Խաչատրյանը, Միլենա Սարգսյանը:

Իր գեղեցիկ բանաստեղծություններով



ներկաներին ուրախացրեց թիվ 4 դպրոցի աշակերտուհի Ռոզալյա Հակոբյանը:

Ներածական խոսքով հանդես եկավ «Ռուսական մշակույթի օջախ» հկ-ի նախագահ Ջուլիետա Կուզինան՝ մասնավորապես նշելով. «Ռուսները Հայաստանում հենց այնպես համայնք չեն, այլ կազմակերպված համայնքային կազմակերպություն և հանդիսանում են Հայաստան աշխարհի մի մասունքը»:

Ցերեկույթը լավ արձագանք գտավ ու արժանացավ ներկաների բարձր գնահատականին:

սեփ. լրատվություն-Վանաձոր

Стихотворения Розалии Акопян

«Мне 16 лет. Я учусь в 4 школе имени А. С. Пушкина г. Ванадзора и очень люблю свою школу.

Русским языком я хорошо владею благодаря моей маме - она украинка. С детства у меня появилась любовь к русскому языку и русской культуре».

Плач Ярославны.

(свободный перевод из «Слова о полку Игореве»)

Ярославны голос
слышен над Дунаем.
Обернувшись чайкой,
ранним свежим утром,
улететь к любимому-
вот ее желанье!
«О, Дунай, Дунай!
Омочу рукав свой шелковый
в чистых водах твоих студеных.
Оботру живой водицей целительной
раны тела моего любимого».
На стене Путивля причитанья
отправляет ветру, с ожиданьем помощи,
с мольбами о покое воинам,
что спят на поле брани.
«О, Ветрило-ветер, веешь ты свободно.
На море, на синем, корабли ласкаешь.
Облаками в небе ты легко играешь.
А мое веселье, как ковыль бросаешь».
Слезы Ярославны до Днепра стекают.
«О, Словутич Днепр, прекрасный!
Ласковый бываешь ты и страстный.

Մրցաշար Սարչապետում

Տաշիրի շրջանի Սարչապետ գյուղում անցկացվեց տեղի միջնակարգ դպրոցի մաթեմատիկայի վաղամեռիկ ուսուցիչ Աշոտ Պալաքյանի հիշատակին նվիրված շախմատի հերթական մրցաշարը:

Բացի համայնքի մասնակիցներից, մարզի տարբեր քաղաքներից ժամանած շախմատիստները 9 օր պայքարեցին՝ որոշելու հաղթողին: Իսկ հաղթողին սպասում էր դրամական պարգև ու գեղեցիկ գավաթ, որին արժանացավ Էդիկ Բարսեղյանը:



Տարբեր մրցանակներից ու դրամական պարգևներից անմասն չմնացին երկրորդը ճանաչված Ստեփանավան քաղաքի ներկայացուցիչ Ֆրեդերիկ Սարգսյանը, 3-4 տեղերը բաժանած տաշիրցի Մարկ Բարսեղյանը ու վանաձորցի Սպարտակ Պապյանը:

Սարչապետի գյուղապետ Արգամ Պողոսյանը համայնքի, մասնակիցների ու իր անունից խորին շնորհակալություն հայտնեց ՀՀ ԱԺ դեպուտատ Կարեն Կարապետյանին, կազմակերպման ծախսերը հոգալու համար՝ մասնավորապես նշելով, որ նա ոչ մի անգամ չի մոռանում հայրենի մարզի ո՛չ մարզիկներին, ո՛չ մշակույթի մարդկանց, ո՛չ մանուկներին՝ հովանավոր կանգնելով բազմաբնույթ միջոցառումների:

սեփ. լրատվություն-Վանաձոր

Միջոցառում՝ նվիրված Պուշկինի հիշատակին

Հունիսի 6-ին, Լոռվա բնության գողտրիկ մի անկյունում՝ Պուշկինի լեռնանցքում, ՌԴ գլխավոր հյուպատոսարանի և Հայաստանում Ռուսաստանի արտասահմանյան կապերի կենտրոնի ներկայացուցչության աջակցությամբ «Ռոսիա» հասարակական կազմակերպությունը, «Հարմոնիա» ռուսական մշակույթի ազգային կենտրոնը և ռուսհայկական երիտասարդական նախաձեռնության կենտրոնը կազմակերպել էին երրորդ հանրապետական միջոցառումը՝ նվիրված ռուս մեծ գրող Ա. Ս. Պուշկինի 209-րդ տարեդարձին: Միջոցառումը այն վայրում էր, ուր Պուշկինը հանդիպել է Գրիբոյեդովի դին տեղափոխող մարդկանց, ինչի կապակցությամբ հուշարձան է կառուցվել:

Ինչպես նշեց Հայաստանի «Ռոսիա» հկ-ի նախագահ Յուրի Եկովենկոն օրն, իրոք, տոնական էր, որը մեկ անգամ ևս հավաստում է Ա. Պուշկինի մեծ ավանդը համաշխարհային գրականության մեջ: Հնչեցին նրա բանաստեղծություններից և բանաստեղծություններ նվիրված նրան: Հանրապետական միջոցառմանը մասնակցում էին Աբովյանից, Վանաձորից, Գյումրիից, Գավառից, Ստեփանավանից, Արմավիրից և Չարենցավանից ժամանած ընթերցասեր խմբեր: Գյումրի քաղաքում ՌԴ գլխավոր հյուպատոսի տեղակալ Ստանիսլավ Ռուժինսկու խոսքերով՝ Պուշկինը համաշխարհային մեծության գրող էր և միջոցառման նպատակն է սերունդներին փոխանցել Պուշկինյան ոգին:

Միջոցառմանը մասնակցում էր Գյումրիում տեղակայված Ռուսաստանի 102-րդ ռազմական բազայի հրամանատարի դաստիարակչական գծով տեղակալ, գնդապետ Աշոտ Կարապետյանը, Երևանում գործող «Օդալուչ» հասարակական կազմակերպությունը (նախագահ՝ Ալեքսանդր Սերով), Ստեփանավանի Պուշկինի անվան (թիվ 2) միջնակարգ դպրոցի ներկայացուցիչներ:

Աբովյան քաղաքը ներկայացրեց Պիեռ Բուդաղյանը. նա ընթերցեց «Կովկասի գերին» պոեմից մի հատված:

Վանաձորից ներկա էին «Ռուսական մշակույթի օջախ» հասարակական կազմակերպությունը (նախագահ՝ Ջուլիետա Կուզինան) և Գրիբոյեդովի անվան (թիվ 11) դպրոցի ներկայացուցիչներ: Ինչպես նշեց Ջ. Կուզինան դեռևս 1978 թվականին իր և գեղանկարիչ Գեորգի Թովմասյանի նախաձեռնությամբ Պուշկինի լեռնանցքում բացվեց Պուշկինի և Գրիբոյեդովի հիշատակի տունը՝ արխիվային հարուստ նյութերով: Տան այցելուներն են եղել ակադեմիկոսներ, գրողներ, դերասաններ, տիեզերագնացներ: Սակայն հետագայում այն դադարեց գործել: Տիկին Կուզինան առաջարկեց այդ տեղում, որտեղ Պուշկինը տեսել է Գրիբոյեդովի դիակը, հիմնել նոր տուն-թանգարան այդ նախաձեռնության համար ներգրավելով Հայաստանում գործող ռուսական կազմակերպություններին:

Տպավորիչ էր նաև Ռուզաննա Մուրադյանի «Պուշկինի լեռնանցք» բանաստեղծությունը՝ նվիրված մեծ պոետին:

2009 թ. հայտարարվելու է Պուշկինյան տարի Ռուսաստանում: Եվ այդ կապակցությամբ հույսեր կան, որ նոր հուշարձաններ կտեղադրվեն աշխարհի տարբեր անկյուններում:

Միջոցառումից հետո Պուշկինի ծննդյան օրը շարունակվեց Լոռու մարզային գրադարանում, ուր ցուցադրված էր հարուստ գրքային ցուցահանդես: Երեխաների համար ցուցադրվեցին գեղարվեստական ֆիլմ և մուլտֆիլմեր Պուշկինի հեքիաթների սյուժեով, իսկ ուսանողների համար՝ գրողին նվիրված ռուսաստանյան գիտաժողովի նյութեր:

սեփ. լրատվություն-Վանաձոր

Господин, великий мой, прошу тебя,
приласкай любовь мою,
слеза пусть не превратится в море,
а глаза мои не высохнут от горя».
К солнцу светлому подняла влажны очи:
«Светло-Солнышко, ты греешь даже ночью.
Чувствуем тепло твоих речей.
Я молю тебя, в безводном поле
воинов-защитников земли,
пожалей их всех, побереги!
Жаждой мученической их ты не томи!
Не пошли на них горячие лучи!»
Ярославны стон звучит над Русью,
вещий колокол поет в печальной мгле…

***

Россия – матушка вскормила,
Его на ноги подняла.
И жизнь его вся воплотилась
В устах народа навсегда!
Московский озорной гуляка.
Конечно, он не без греха!
И плакала его собака,
К которой жизнь была так зла.
А за окном береза белая
И журавли летят печально вдаль.
И роща золотая, и рябина красная,
И клен опавший - все в моих глазах.
Почти сто лет прошло с тех пор,
Но песнь твоя звучит во мне,
И рожь волниста при луне.
И пел ты песни Шаганэ!

***

У буквы К в начале предложения
Стояла запятая в размышлениях.
Куда же ей встать, где место ей?
«Казнить нельзя помиловать!»
После «казнить»? После «нельзя»?
Не из простых задач эта.
Всего лишь просто запятая,
Но смысл большой несет она.
Стояла, думала, гадала,
Где место ей, чтобы она
Кому-то жизнь не поломала.
«Казнить нельзя, помиловать!»
После «нельзя» она решила.
И с облегчением вздохнув,
На строчку быстро заскочила.
Вот тут ей место! Так и быть!

Перо летописца

Перо летописца трудилось веками.
Для будущей жизни уроки писало.
От буквы, от слова-сокровища знаний!
Сокровища знаний лежат в переплетах.
Берем их оттуда мы снова и снова.
И мы сохраним тебя, русская речь,
Великое русское слово!

Сегодня языком Маштоца
Армения моя гордиться может.
Но позабыть она не хочет
основ славянского письма!

Տաշիրի շրջան

ՊՐԻՎՈԼՆՈՅԵ ԳՅՈՒՂԸ ԲԱԶՄԱԶԳ ՀԱՄԱՅՆՔ Է



Լոռվա բնության գեղատեսիլ անկյուններից մեկում՝ սարերի փեշին սփռված Պրիվոլնոյեն 167-ամյա պատմություն ունի: Գյուղը հայտնի է եղել իր յուրօրինակ ավանդույթներով, մաքրակենցաղ ու աշխատասեր բնակիչներով:

Ռուս-թուրքական պատերազմից հետո ռուսական կառավարության հրամանով որոշ ռուս զինվորներ պետք է մնային Հայաստանում: Նրանց մի մասը վերաբնակեցվեց այս բնակավայրում՝ ստանալով իր անվանումը՝ Պրիվոլնոյե, որ սկզբնական իմաստով նշանակում է «ոչ իրենց կամքով վերաբնակեցված» (Պրիվոլնոյեն հիմնադրվել է 1840 թ.-ին, ոչ իրենց կամքով վերաբնակեցված Պերմի, Մոսկվայի և Կալինինի մարզերից եկած կազակ զինվորներով, ովքեր այսուհետ թույլտվություն էին ստացել այստեղ բերելու իրենց ընտանիքները):

Գյուղը կառուցվել է կապիտան Կազակովի նախագծով՝ խստորեն պահպանելով փողոցների համաչափությունը: Տները ծղոտե տանիքներով էին, փոքր պատուհաններով, առանց պատշգամբների, բայց շատ ամուր: Առաջին բնակիչներից էին Սկյոպլյուսովները, Ֆյոդորովները, Կիսյաները: Կարճ ժամանակ անց գյուղը համալրվեց ցարական կառավարության կողմից Ուկրաինայից աքսորված ապստամբներով:

1875 թվականին Պրիվոլնոյեում կառուցվեց մինչ օրս կանգուն ուղղափառ եկեղեցին: 19-րդ դարի 40-ականներից մինչև դարավերջ հոգևորականներից բացի գյուղում գրագետ մարդ չկար: 1897-ին այստեղ արդեն ապրում էր 1868 մարդ, սոցիալիստական հեղափոխությունից հետո՝ 1926 թ.-ին՝ 2026, շատ ավելի, քան այսօր: Այդ տարիներին ստեղծվում է քառամյա դպրոցը, որը 1936 թ.-ին արդեն յոթնամյա էր, 1942-ից՝ տասնամյա: Պրիվոլնոյեի միջնակարգ դպրոցը աչքի էր ընկնում ուսուցման բարձր մակարդակով և կրթության բնագավառում տեղ գտած ձեռքբերումներով, հատկապես Պավել Կոսակինի ղեկավարության օրոք, ով իր կյանքի 25 տարիները նվիրաբերել է Պրիվոլնոյեի կրթօջախին:

Նախորդ դարի 60-ականներին գյուղն արդեն բազմազգ էր: Այստեղ բնակություն հաստատեցին նաև հայեր, եզդիներ, ադրբեջանցիներ: Այս տարիներին Պրիվոլնոյեն աչքի էր ընկնում մաքուր փողոցներով և խնամված պարտեզներով, իսկ Զատիկի տոնից առաջ տների պատերը անպայման սպիտակեցվում էին:

Գյուղն ուներ ակումբ, հիվանդանոց, պոլիկլինիկա, դեղատուն և նույնիսկ բժիշկների համար նախատեսված տուն: Խորհրդային կարգերի փլուզումից հետո, չնայած ռուս բնակչության մեծ մասը լքեց գյուղը, այնուհանդերձ այն մնում է մարզի տարաբնակ ամենամեծ գյուղը, 429 տնտեսությունից (1140 բնակիչով) 139-ը ռուսական համայնքի ներկայացուցիչներն են:

Մեր օրերում գյուղի բնակչության հիմնական զբաղմունքը անասնապահությունն է:

Պրիվոլնոյեն էլ զուրկ չէ հոգսերից. ամենամեծ պրոբլեմներից մեկն էլ ճանապարհներն են, հատկապես Տաշիրին կապող: Մեկ տարի առաջ Ազգային ժողովի պատգամավոր Կարեն Կարապետյանի միջնորդությամբ գյուղը գազաֆիկացվեց և արդեն ունի 200-ից ավելի բաժանորդներ: Սակայն ջրամատակարարման խնդիրը լրջորեն խոչընդոտում է գյուղի բարեկեցությանը: Շատ բնակիչներ ջրից օգտվում են պապենական եղանակով:


Չնայած համայնքում գոյություն ունեցող հոգսերին՝ բնիկներն այստեղ համբերատար են և բարեհամբյուր, նորեկներն էլ հարմարվել են միջավայրին:

Գյուղի բնակիչները, անկախ ազգությունից և այստեղ բնակություն հաստատված տարիներից, ապրում են բարեկեցիկ ապագայի ակնկալիքներով և հուսում, որ երկրի սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման հետ մեկտեղ երբեմնի լիաշունչ գյուղը կվերագտնի իրեն:

սեփ. լրատվություն-Վանաձոր

Հայաստանի մարզիկներն օլիմպիական խաղերում

1956, Մելբուռն, 16-րդ ամառային օլիմպիադա



1956-ի նոյեմբերի 22-ին Մելբուռնի «Կրիկետն Գրաունդ» մարզադաշտում հանդիսավորությամբ տրվեց 16-րդ ամառային օլիմպիական խաղերի մեկնարկը: Կանաչ մայրցամաք էին ժամանել 68 երկրների ավելի քան 550 մարզիկներ, որոնք իրենց հարաբերությունները պարզեցին 22 մարզաձևից: Այս անգամ ԽՍՀՄ հավաքականի 325 մարզիկների թվում էին Հայաստանը ներկայացնող մարմնամարզիկ Ալբերտ Ազարյանը, ինգամարտիկ Իգոր Նովիկովը, բռնցքամարտիկ Վլադիմիր Ենգիբարյանը, թեթևատլետ Վարդան Հովսեփյանը և սուսերամարտիկ Վալենտին Չեռնիկովը:

Մարմնամարզության մրցումներում համառ մրցապայքար էր ծավալվել խորհրդային և ճապոնացի մարմնամարզիկների միջև: Մրցումների պարտադիր ծրագրի կատարումից հետո ԽՍՀՄ հավաքականն ընդամենը 0,1 միավորով էր գերազանցում ճապոնացիներին: Այնպես որ, ամեն ինչ վճռվելու էր կամավոր ծրագրում: Խորհրդային մարմնամարզիկները հիանալի ելույթներ ունեցան ու կրկին ցուցադրելով բարձր վարպետություն, թիմային պայքարում դարձան օլիմպիական չեմպիոններ: Այդ հաջողությունում իր արժանի ներդրումն ուներ նաև 27-ամյա անվանի մարմնամարզիկ, օղակների արքա Ալբերտ Ազարյանը: 1954-ին Իտալիայում կայացած աշխարհի առաջնությունում, որին խորհրդային մարմնամարզիկներն առաջին անգամ էին մասնակցում, օղակների ապագա արքան հանդիսականներին մատուցեց արտասովոր նորույթ՝ «խաչ» վար-

Э11

ԿԱՐՃԱԴՈՇԻ ՕՐԸ

Տաշիրի շրջանի Լեռնահովիտ գյուղի մոտակայքում գտնվող Կարճադոշ սարը երկար տարիներ ուխտատեղի է համարվել: Սակայն վերջին ժամանակներում Կարճադոշն ունեցավ իր օրը:

Ամեն տարի հունիսի 17-ին սար են բարձրանում ոչ միայն լեռնահովիտցիները. այստեղ գալիս են Տաշիրից, տարածաշրջանի գյուղերից: Քիչ չեն լինում ուխտավորներ՝ մարզից դուրս բնակվող նախկին տաշիրցիներ, լեռնահովիտցիներ:

Այդ օրը Կարճադոշի մատուռն ավելի քան մարդաշատ է լինում: Ուխտավորները վառում են մոմեր, աղոթքներ հղում Երկնային Տիրոջը, մտապահում ցանկություններ, մատաղներ անում:

Վառվող մոմերի մեծաքանակության պատճառով դրանք վառվում են դրսում՝ հատուկ պատրաստված տեղում: Հալված մոմերն էլ հետագայում վարպետ Արայատի ձեռքերով վերածվում են սրբապատկերների ու իրենց տեղը գտնում մատուռում:



Հավատքի ոգեշնչման այդ օրը, սակայն, դուրս գալով կրոնական շրջանակներից, վերածվում է ժողովրդական տոնակատարության: Մարդիկ սար են բարձրանում հոծ խմբերով, ողջունում իրար և արտասանում օրվա ամենակարևոր բառերը. «Ուխտդ ընդունելի լինի»:

– Սուրբ Կարճադոշին, խնդրիմ, կաղաչիմ, որ երկրին խաղաղություն տա, մահին քանկություն, մեր ջահելներին էլ օտարությունից բարի վերադարձ:

Կարճադոշի օրը հատկապես մեծ ուրախություն է երեխաների համար, ովքեր բնության գրկում ազատ վազվզելուց բացի ձեռք են բերում տարբեր խաղալիքներ:

Կարճադոշ սարի գագաթից չի կարելի չհիանալ ներքևում սփռված չքնաղ բնապատկերներով, լեռների գողտրիկ հովտում տարածված Լեռնահովտով:

սեփ. լրատվություն

10➲

ժության ուղղահայաց դիրքում նա մարմնի աջ ու ձախ դարձումներ կատարեց, որոնք ապշեցրին բոլորին: Մարմնամարզական աշխարհն այդպիսի բան դեռ չէր տեսել: Այդ օրվանից վարժությունն «ազարյանական խաչ» անվանումն ստացավ:

Հռոմի աշխարհի առաջնությունը փառքի ուղեծիր դուրս բերեց Ազարյանին: Հաջորդ տարի նա դարձավ Եվրոպայի չեմպիոն զուգափայտերի վրա կատարած վարժությունում, իսկ բազմամարտում արժանացավ արծաթե մեդալի: Իսկ օղակների վրա վարժություններում նա իր հավասարը չուներ ԽՍՀՄ-ում:

Մելբուռնում Ազարյանը հասավ փառքի գագաթնակետին: Օղակների վրա նա կրկին անգերազանցելի էր: Եվ կրկին «ազարյանական խաչը» հիացմունքի բուռն ալիք առաջացրեց: Ազարյանի ելույթն արժանացավ ամենաբարձր գնահատականին (9,95), որի շնորհիվ հայ մարմնամարզիկը նվաճեց օլիմպիական չեմպիոնի տիտղոսը: Մեկ ոսկե մեդալ էլ նա ստացավ թիմային պայքարում ԽՍՀՄ հավաքականի տարած հաղթանակի համար: Հանձին Ազարյանի, մարմնամարզության հայկական դպրոցը Շահինյանից հետո օլիմպիական իր երկրորդ չեմպիոնն ունեցավ:

Մելբուռնի օլիմպիադան Իգոր Նովիկովի համար 2-րդն էր: Մարզասերները նրան հաճախ էին հայ ժողովրդի ռուս զավակ անվանում: Նա ընտանիքով Երևան էր տեղափոխվել 1934-ին, 5 տարեկանում: Հելսինկյան օլիմպիադայից հետո Նովիկովը մեծ փորձ էր ձեռք բերել, դարձել էր ԽՍՀՄ չեմպիոն, թիմային հաշվարկով աշխարհի առաջնության արծաթե մրցանակակիր: Մելբուռնում Նովիկովը ժամանակակից հնգամարտի ԽՍՀՄ հավաքականի ավագն էր: Սովետական հնգամարտիկների եռյակը (Ի. Նովիկով, Ի. Դերյուգին, Ա. Տարասով) անհաջող հանդես եկավ առաջին մրցաձևում՝ ձիավարությունում: Հրաձգության մրցումներում Նովիկովի թիմը զգալիորեն շտկեց դրությունը՝ տեղափոխվելով 2-րդ հորիզոնական: Լողի մրցումներում ԽՍՀՄ հավաքականը թիմային պայքարում հաղթեց և ընդհանուր հաշվարկով ընդհուպ մոտեցավ առաջատարին՝ ԱՄՆ-ի մարզիկներին: Ամեն ինչ պետք է վճռեր կրոսավազքը:

Նովիկովին հարկ եղավ դրսևորել կամային հատկանիշները: Մրցումներից առաջ սրսկելիս բժիշկն անզգուշորեն ասեղը նրա մկանի մեջ էր մտցրել: Չնայած դրան, Նովիկովը հաջողությամբ հաղթահարեց 4000 մ մրցատարածությունը և հավաքականի համար ապահովեց առաջին տեղը: Թիմային հաղթանակի համար Նովիկովն իր թիմակիցների հետ արժանացավ ոսկե մեդալի: Իսկ անհատական պայքարում, ինչպես և Հելսինկիում, Նովիկովը կրկին 4-րդն էր: Օլիմպիական խաղերում հասած աննախադեպ հաջողության համար Իգոր Նովիկովին շնորհվեց սպորտի վաստակավոր վարպետի կոչում:

Մելբուռնյան օլիմպիադայում Հայաստանին 3-րդ ոսկե մեդալը պարգևեց անվանի բռնցքամարտիկ Վլադիմիր Ենգիբարյանը: Առաջին կիսամիջին քաշում ռինգի անվանի վարպետը վստահ ելույթներ ունեցավ և արժանիորեն ճանաչվեց լավագույնը:

Վիճակահանությամբ Ենգիբարյանի առաջին մրցակիցը լեհ բռնցքամարտիկ, 1955 թ. Եվրոպայի չեմպիոն Լեշեկ Դրոգոշն էր: Մեկ տարի առաջ Արևմտյան Բեռլինում կայացած Եվրոպայի առաջնությունում հայ մարզիկին չէր հաջողվել հաղթահարել լեհ բռնցքամարտիկի դիմադրությունը և նա ռինգը թողել էր պարտված: Ենգիբարյանը մրցակցի նկատմամբ ռեւանշի հասնելու վճռականությամբ սկսեց մենամարտը: Երկուսն էլ ձախլիկ էին և ձգտում էին միմյանց հարվածներ հասցնել: Ենգիբարյանը գործում էր արագ ու համարձակ և շուտով նրա ձախով դիպուկ հարվածը նոկդաունի ենթարկեց մրցակցին՝ նրան տապալելով գետնին: Դրոգոշը միայն ութ հաշվից հետո կրկին ներգրավվեց պայքարի մեջ, սակայն այդպես էլ չկարողացավ վերջնականապես ուշքի գալ: Բոլոր 3 ռաունդներում էլ հայ բռնցքամարտիկի առավելությունը նկատելի էր և հաղթանակը միաձայն շնորհվեց նրան:

Դա չափազանց կարևոր հաղթանակ էր, որը Ենգիբարյանի համար ուղի հարթեց դեպի օլիմպիական բարձունքը: Նրա հաջորդ մրցակիցները ևս անկարող էին կանգնեցնել Ենգիբարյանի հաղթարշավը: Հայ բռնցքամարտիկը գերազանց անցկացրեց մենամարտերը ֆրանսիացի Սալյուդենի, Հարավային Աֆրիկայի ներկայացուցիչ Լոուբշերի հետ, իսկ եզրափակիչում գեղեցիկ ոճով «ծնկի բերեց» իտալացի Նենչինին: Օլիմպիական ոսկե մեդալը նրա փառքի գագաթնակետն էր: Նշենք, որ բացի Ենգիբարյանից, խորհրդային բռնցքամարտիկներից միայն Վ. Սաֆրոնովին ու Գ. Շատկովին հաջողվեց նվաճել օլիմպիադայի չեմպիոնի տիտղոսը: Այդ հաջողության համար նրանց շնորհվեց սպորտի վաստակավոր վարպետի կոչում:

Ռինգում առաջին լուրջ հաջողությանը Ենգիբարյանը հասել էր դեռեւս 1948-ին՝ 16 տարեկանում Ռիգայում դառնալով «Աշխատանքային հերթափոխ» ընկերության կենտրոնական խորհրդի չեմպիոն: 1952-ին Ենգիբարյանը սկսեց մարզվել մարզաձևի

➲12

11Ͻ

հմուտ մասնագետ Էդուարդ Արիստակեսյանի մոտ՝ կատարելագործելով վարպետությունը: Հաջող էր մրցաշրջան-53-ը: Նախ նա Մոսկվայում ԽՍՀՄ առաջնությունում դարձավ բրոնզե մեդալակիր, ապա Բուխարեստում՝ ուսանողության և երիտասարդության համաշխարհային փառատոնում նվաճեց ոսկե մեդալ: Վարշավայում անցկացված մայրցամաքի առաջնությունում ռինգի վարպետը չդավաճանեց իր ոճին և տպավորիչ հաղթանակներ տոնելով՝ ճանաչվեց լավագույնն իր քաշային կարգում: Երկու տարի անց նա Մոսկվայում նվաճեց ԽՍՀՄ չեմպիոնի կոչումը՝ արժանանալով լավագույն տեխնիկայի համար սահմանված հատուկ մրցանակի: 1956-ին, մինչ օլիմպիադան, Ենգիբարյանը տպավորիչ հաղթանակներ տոնեց ԽՍՀՄ ժողովուրդների Սպարտակիադայում և երկրի առաջնությունում՝ մեկ անգամ ևս հաստատելով իր բարձր կարգը: Եվ ահա այս ամենի բնական շարունակությունը գերազանց ելույթն էր օլիմպիական խաղերում:

Մելբուռնում Հայաստանի չորրորդ պատվիրակը՝ սուսերամարտիկ Վալենտին Չեռնիկովն անհաջող հանդես եկավ, իսկ թեթևատլետ Վարդան Հովսեփյանը հիվանդության պատճառով չմասնակցեց գնդի հրման մրցումներին: Դա, իհարկե, ցավալի էր, քանի որ Վարդանը գտնվում էր գերազանց մարզավիճակում: 1956-ին, մինչ օլիմպիադան, նա մասնակցել էր հինգ մրցման և բոլորում էլ հաղթել էր երկրի նոր ռեկորդով: Տաշքենդում մասնակցելով նախաօլիմպիական ընտրական մրցումներին, նա գունդը հրել էր 17 մ 67 սմ, որն ընդամենը 9 սմ-ով էր զիջում Իրժի Սկոբլայի եվրոպական ռեկորդին: Իսկ մինչ այդ, 1955-ին Թբիլիսիում նա դարձել էր երկրի չեմպիոն (17 մ 47 սմ), 1956-ին նվաճել ԽՍՀՄ ժողովուրդների Սպարտակիադայի և երկրի չեմպիոնի տիտղոսները:

Եվ այսպես, մելբուռնյան օլիմպիադան նոր փայլուն էջ գրեց հայկական սպորտի տարեգրությունում: 1952 թ. Հրանտ Շահինյանի նվաճած օլիմպիական 4 մեդալներին (2-ական ոսկի և արծաթ) գումարվեցին Ալբերտ Ազարյանի, Վլադիմիր Ենգիբարյանի և Իգոր Նովիկովի չորս ոսկե մեդալները:

ՕԼԻՄՊՈՍԻ ԵՐԿՐՈՐԴ ԳՐՈՀՆ ԷԼ ՊՍԱԿՎԵՑ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՄԲ

Հռոմ, 1960,

17-րդ ամառային օլիմպիադա

Համաշխարհային սպորտի հերթական ստուգատեսի մայրաքաղաք էր ընտրվել Հռոմը, որտեղ 1960-ի օգոստոսի 25-ից սեպտեմբերի 11-ը 84 երկրներից ժամանած 5396 մարզիկներ օլիմպիական ծրագրի 20 մրցաձևում խաղարկեցին մեդալների 151 հավաքածու: Հռոմի օլիմպիական խաղերն աչքի ընկան աննախադեպ բարձր արդյունքներով. սահմանվեց օլիմպիական 70 ռեկորդ, այդ թվում՝ 30 համաշխարհային: Խաղերի հերոսներ դարձան ամերիկացի վազորդուհի Վիլմա Ռուդոլֆը և խորհրդային ծանրորդ Յուրի Վլասովը, որոնք նվաճեցին 3-ական ոսկե մեդալ: Ռուս ծանրորդը օլիմպիական ռեկորդներ սահմանեց բոլոր 3 վարժություններում:

Կրկին անվիճելի էր խորհրդային մարզիկների առավելությունը, որոնք նվաճելով 43 ոսկե, 29 արծաթե և 31 բրոնզե մեդալ, ոչ պաշտոնական թիմային հաշվարկով գրավեցին առաջին տեղը: Խորհրդային թիմի կազմում օլիմպիադայում հանդես եկան Հայաստանի 5 մարզիկներ՝ մարմնամարզիկ Ալբերտ Ազարյանը, հնգամարտիկ Իգոր Նովիկովը, բռնցքամարտիկ Վլադիմիր Ենգիբարյանը, սուսերամարտիկ Վալենտին Չեռնիկովը և թեթևատլետ Ալեքսեյ Կոնովը: Ընբշամարտի հավաքականում որպես պահեստային էր նշված Նորայր Մուշեղյանը, սակայն նրան բախտ չվիճակվեց մրցագորգ դուրս գալ:

Օղակների արքան անգերազանցելի է

Ալբերտ Ազարյանի՝ օլիմպիական բարձունքի երկրորդ գրոհն էլ պսակվեց հաջողությամբ: Ինչպես և Մելբուռնում, Հռոմում էլ Ազարյանն անգերազանցելի էր օղակների վրա վարժություններում: Թիմային պայքարում կրկին հիմնական մրցավեճը ծավալվեց խորհրդային և ճապոնացի մարմնամարզիկների միջև: Խաղարկվող 22 մեդալներից 10-ը բաժին հասավ խորհրդային մարզիկներին, որոնք թիմային հաշվարկով ի վերջո գրավեցին 2-րդ տեղը: Ալբերտ Ազարյանը, Բորիս Շախլինը, Յուրի Տիտովն ու նրանց երիտասարդ թիմակիցները իրենց վարպետությամբ հիացրին մարզասերներին: Մարզասրահի տրիբունաներում տեղ զբաղեցրած մարմնամարզության սիրահարները սեպտեմբերի 10-ին եզակի հնարավորություն ունեցան անձամբ տեսնելու «ազարյանական խաչը», ինչն արժանացավ նրանց բուռն ծափահարություններին՝ մարզիկին պարգևելով չեմպիոնի ոսկե մեդալ: Այսպիսով, Ալբերտ Ազարյանը դարձավ օլիմպիական խաղերի կրկնակի չեմպիոն՝ արծաթե մեդալ նվաճելով թիմային պայքարում:

Հնգամարտի ասպետի 3-րդ արշավանքը

Օլիմպիադայի մասնակից խորհրդային հավաքականի կազմում Իգոր Նովիկովն ամենատիտղոսակիր ու փորձառու մարզիկներից մեկն էր: 31-ամյա անվանի մարզիկն արդեն 3-րդ անգամ էր մեկնարկում օլիմպիական խաղերում: Մելբուռնում նա իր թիմակիցների հետ արժանացել էր չեմպիոնի կոչմանը: Բացի այդ, նրա մեդալների հարուստ հավաքածուում տեղ էին գտել աշխարհի 3 առաջնությունների ոսկե մեդալները թիմային հաղթանակի համար, աշխարհի 1957-ի առաջնության անհատական պայքարում նվաճած ոսկե մեդալը: Նովիկովը նաև ԽՍՀՄ քառակի չեմպիոն էր, ԽՍՀՄ ժողովուրդների Սպարտակիադայի կրկնակի հաղթող, միջազգային մի շարք մրցաշարերի մրցանակակիր:

Հռոմում Նովիկովն իր երիտասարդ թիմակիցներ Տատարինովի ու Սելցի հետ պետք է պայքարեր Մելբուռնում նվաճած դիրքերը պահպանելու համար: Դա այնքան էլ հեշտ գործ չէր, քանի որ հանձինս Հունգարիայի ու ԱՄՆ-ի հնգամարտիկների նրանք գործ ունեին բավական ուժեղ մրցակիցների հետ:

Ինչպես միշտ, հնգամարտի մրցումները սկսվեցին ձիարշավով: 4,5 կմ ուղեգծում 25 արգելք էր դրված, որոնք անհրաժեշտ էր անսխալ հաղթահարել: Մեկնարկի էին դուրս եկել 23 երկրների 60 մարզիկներ: Հաղթող ճանաչվեցին մեքսիկացիները, որոնք 3393 միավորով գլխավորեցին աղյուսակը: Խորհրդային թիմը 3087 միավորով 6-րդն էր: Սուսերամարտի մրցումներն առանձնապես չազդեցին ընդհանուր արդյունքների վրա: ԽՍՀՄ հավաքականը մեկ աստիճանով վեր բարձրացավ, իսկ առաջատարի դերը ստանձնեցին հունգարացիները: Հաջորդ երկու մրցաձևերն էլ խորհրդային հնգամարտիկներին հնարավորություն չտվեցին վեր բարձրանալ. նրանք բավարարվեցին 4-րդ տեղով: Անհատական հաշվարկով առաջին տեղում էր ընթացում ամերիկացի Բեկը, իսկ Նովիկովը 9-րդն էր: Եվ կրկին, ինչպես և Մելբուռնում, ամեն ինչ վճռելու էր կրոսավազքը: Սակայն, եթե Ավստրալիայում ԽՍՀՄ հավաքականին հաջողվեց հաղթող դառնալ, ապա Հռոմում ստիպված էր բավարարվել արծաթե մեդալով՝ օլիմպիական ոսկին զիջելով հունգարացիներին: Բրոնզը բաժին հասավ ամերիկացիներին: Անհատական պայքարում չեմպիոնի կոչմանն արժանացավ հունգարացի Ֆերենց Նեմեթը: Իգոր Նովիկովը 5-րդն էր:

Բրոնզե պարգեւ երկրորդ փորձից

Վալենտին Չեռնիկովի համար երկրորդ օլիմպիադան ավելի հաջող էր: Նա սուսերամարտի ԽՍՀՄ հավաքականի կազմում արժանացավ բրոնզե մեդալի՝ թիմային պայքարում 3-րդ տեղը գրավելու համար: Չնայած երիտասարդ տարիքին, 23-ամյա Վալենտինն արդեն բազմափորձ սուսերամարտիկ էր, մի շարք մրցաշարերի հաղթող ու մրցանակակիր: 1957-ին մասնակցելով Կարլովե Վարիի միջազգային մրցաշարին, նա դարձել էր հաղթող, իսկ հաջորդ տարի Բուխարեստում կայացած աշխարհի երիտասարդական առաջնությունում նվաճել էր չեմպիոնի տիտղոսը: Նույն տարում նա նվաճել էր նաև սուսերամարտի ԽՍՀՄ գավաթը:

1957-60-ին նա ԽՍՀՄ առաջնություններում անհատական հաշվարկում արժանացել էր արծաթե մեդալների: 1960-ին, մինչ օլիմպիադան, նա մասնակցել էր Լոնդոնում անցկացված «Մարտինիի գավաթի» խաղարկությանը, որտեղ զբաղեցրել էր 2-րդ տեղը: Եվ ահա Հռոմում Չեռնիկովի մեդալների հավաքածուն համալրվեց ևս մեկով: Իսկ մեկ տարի անց նա թիմային հաշվարկով դարձավ աշխարհի չեմպիոն:

Վնասվածքը խանգարեց

Վլադիմիր Ենգիբարյանի համար Հռոմի օլիմպիադան ևս երկրորդն էր: Մելբուռնյան օլիմպիադայից հետո ընկած ժամանակահատվածում ռինգի անվանի վարպետն օլիմպիական ու աշխարհի չեմպիոնների կոչումներին ավելացրեց ևս երեքը: 1957 և 1959-ին նա ուժեղագույնը ճանաչվեց Եվրոպայում՝ դառնալով մայրցամաքի եռակի չեմպիոն, իսկ 1958-ին նվաճեց ԽՍՀՄ չեմպիոնի կոչումը՝ արժանանալով իր 3-րդ ոսկե մեդալին: Ցավոք, վնասվածքի պատճառով Ենգիբարյանին չհաջողվեց կրկնել մելբուռնյան օլիմպիադայի հաջողությունը:

Ենգիբարյանի առաջին մրցակիցը գերմանացի Բուսեն էր: Մեր մարզիկն անվիճելի առավելության հասավ մրցակցի նկատ-

Ͻ13

12⊃

մամբ՝ նրան հաղթելով առաջին իսկ ռաունդում: Հաջորդ հանդիպումը հարավաֆրիկացի Լուդիկի հետ ավելի համառ բնույթ կրեց: Մրցակիցը բարձրահասակ էր ու նույնպես ձախլիկ և հեշտ չէր նրան հարվածներ հասցնելը: Հարվածներից մեկի ժամանակ Ենգիբարյանն ուսագոտում սուր ցավ զգաց: Հայ բռնցքամարտիկի համար հեշտ չէր նման պայմաններում մենամարտելը, սակայն նա իր մեջ ուժ գտավ հանդիպումը հաղթական ավարտի հասցնելու: Ինչպես պարզվեց մենամարտից հետո, Ենգիբարյանը ուսամկանի լուրջ վնասվածք էր ստացել, ինչն էլ ի վերջո, ճակատագրական եղավ: Քառորդ եզրափակիչում նա զիջեց լեհ Կասպշիկին ու դուրս մնաց մեդալների համար մղվող պայքարից:

Թեև աթլետիկայի ԽՍՀՄ անհատական առաջնությունում ցույց տված բարձր արդյունքները Ալեքսեյ Կոնովին հնարավորություն ընձեռեցին ընդգրկվելու երկրի հավաքականում և մեկնելու Հռոմ: Եվ օլիմպիադայի նորեկն իրեն վատ չդրսևորեց: Նախնական վազքահերթում ցույց տալով 8 րոպե 50 վրկ արդյունք, Կոնովը մտավ եզրափակիչ փուլ: Այստեղ ուժեղագույնների հետ մրցավեճում Կոնովը նույնիսկ մոտ 4 շրջան ընթանում էր առջևից, սակայն հետագայում չկարողացավ մինչև վերջ պահպանել իր իսկ կողմից առաջադրած բարձր տեմպը և 3000 մ արգելավազքն ավարտեց 8-րդը (9 րոպե 18,2 վրկ):

Այսպիսով, Հռոմի օլիմպիադայում Հայաստանի պատվիրակները նվաճեցին 1 ոսկե, 2 արծաթե և 1 բրոնզե մեդալ: Իսկ հայրենիքում նրանց սպասում էին կառավարական պարգևները: Աշխարհի և օլիմպիական խաղերի կրկնակի չեմպիոն, սպորտի վաստակավոր վարպետ, փառաբանված մարմնամարզիկ Ալբերտ Ազարյանը պարգևատրվեց «Պատվո նշան» շքանշանով: «Աշխատանքային արիության համար» մեդալով պարգևատրվեց աշխարհի եռակի չեմպիոն, թիմային հաշվարկով օլիմպիական չեմպիոն և արծաթե մեդալակիր, երեք օլիմպիադաների մասնակից, սպորտի վաստակավոր վարպետ Իգոր Նովիկովը: Իսկ Վալենտին Չեռնիկովն արժանացավ «Աշխատանքային գերազանցության համար» մեդալի:

***

2000-ին Սիդնեյում և 2004-ին Աթենքում կայացած ամառային վերջին երկու օլիմպիադաներում Հայաստանի մարզիկներն անհաջող հանդես եկան: Եթե Սիդնեյում օլիմպիական մրցասպարեզ դուրս եկած հայաստանցի 24 մարզիկները գոնե մեկ բրոնզե մեդալ նվաճեցին, ապա Աթենքում մեր 18 օլիմպիականները պարզապես տապալվեցին՝ ձեռնունայն վերադառնալով հայրենիք:

Աթենքի օլիմպիական խաղերում մեր հանրապետությանը միակ մեդալը պարգևեց ծանրորդ Արսեն Մելիքյանը: Մինչև 77 կգ քաշային կարգում հայ ծանրորդը պոկում վարժությունում ցույց տվեց լավագույն արդյունքը (167,5 կգ), իսկ ահա հրումում այնքան էլ վստահ հանդես չեկավ ու բարձրացնելով 197,5 կգ, երկամարտի 365 կգ արդյունքով դարձավ բրոնզե մրցանակակիր: Հաջողությանը մոտ էր նաև 69 կգ քաշային Ռուդիկ Պետրոսյանը: Թեև հրում վարժության (187,5 կգ) և երկամարտի (335 կգ) արդյունքներն աշխարհի երիտասարդների նոր ռեկորդներ էին, սակայն դրանք բավարար չէին մեդալակիր դառնալու համար: Ռուդիկը գրավեց 5-րդ տեղը:

Աթենքում մեր մարզիկներից լավագույնը հրաձիգ Նորայր Բախտամյանի ելույթն էր: 50 մ ազատ ատրճանակից հրաձգությունում Նորայրը մոտ էր բրոնզե մեդալ նվաճելուն, սակայն վերջին կրակահերթերում դիպուկ չգտնվեց ու զբաղեցրեց 4-րդ տեղը: Օդամղիչ ատրճանակի 10 մ մրցաձևում Նորայրի ցուցանիշը 7-րդն էր: Որոշ չափով իրեն արդարացրեց նաև 62 կգ քաշային ծանրորդ Արմեն Ղազարյանը՝ երկամարտի 295 կգ (135+160) արդյունքով եզրափակելով լավագույն հնգյակը: Բռնցքամարտիկ Ալեքսան Նալբանդյանն էլ հասավ մինչև քառորդ եզրափակիչ:

Աթենքում մեր օլիմպիականների ելույթն իրոք ձախողում էր: 1952-ից մասնակցելով ամառային օլիմպիական խաղերին, հայաստանցի մարզիկները մինչ 2004-ը միայն 1968-ին Մեխիկոյում մեդալ չէին նվաճել: Բայց այն ժամանակ օլիմպիադայում մենք միայն մեկ մասնակից ունեինք՝ ըմբիշ Նազար Ալբարյանը, որը գրավել էր բավական բարձր՝ 4-րդ տեղ: Իսկ ահա Աթենքում 18 մարզիկները համատեղ չկարողացան գեթ մեկ մեդալ նվաճել: Այդ ձախողումից հետո ՀԱՕԿ-ի նախագահ Իշխան Զաքարյանը, որ նաև Սպորտպետկոմի նախագահն էր, հրաժարական տվեց ազգային օլիմպիական կոմիտեի ղեկավարի պաշտոնից: Պեկինի օլիմպիադայի նախապատրաստության քառամյա ցիկլը ղեկավարել է հայտնի գործարար, ԱԺ պատգամավոր Գագիկ Ծառուկյանը, որը նաև իր անձնական միջոցներն է ներդրել մարզիկներին մարզումային նպաստավոր պայմաններ ստեղծելու, նրանց ամեն կերպ աջակցելու ու խրախուսելու համար: Իրոք, նախապատրաստական լուրջ աշխատանք է կատարվել: Այժմ իրենց դրսևորելու հերթը մեր օլիմպիականներինն է: Պեկինի օլիմպիական մրցասպարեզ դուրս եկան հայաստանցի 25 մարզիկներ:

ՊԵԿԻՆՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՆ ԱՄԵՆԱՀԱՋՈՂՎԱԾՆԵՐԻՑ Է ՀԱՅ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեր հավաքականի հաշվեկշռում

6 բրոնզե մեդալ կա

Այս օրերին մարզասերների ուշադրության կենտրոնում Պեկինում ընթացող 29-րդ ամառային օլիմպիական խաղերն են: Թեև մրցումները դեռ չեն ավարտվել, սակայն արդեն կարելի է փաստել, որ պեկինյան օլիմպիադան բավական հաջող էր հայ մարզիկների համար, որոնք այսօրվա դրությամբ արդեն 6 բրոնզե մեդալ են նվաճել: Այս հաջողությունն ավելի ծանրակշիռ է դառնում, եթե համեմատելու լինենք նախորդ երկու օլիմպիադաներում մեր մարզիկների ելույթների հետ: Հիշեցնենք, որ 2000-ին Սիդնեյում մեր մարզիկները նվաճել էին ընդամենը մեկ բրոնզե մեդալ (ծանրորդ Արսեն Մելիքյան), իսկ չորս տարի առաջ Աթենքից հայրենիք էին վերադարձել ձեռնունայն: Անշուշտ, հայ մարզասերներն ուշի ուշով հետևել են հատկապես հայ մարզիկների մրցելույթներին և ծանոթ են նրանց արդյունքներին: Կարծում ենք, նրանց համար հաճելի կլինի ևս մեկ անգամ վերհիշել մեր լավագույն մարզիկների հաղթական ելույթների ակնթարթները, որոնց շնորհիվ Պեկինում վեց անգամ ծածանվեց հայոց եռագույնը: Իհարկե, շատ ցանկալի կլիներ, որ դրոշի բարձրացման հետ մեկտեղ հնչեր նաև Հայաստանի օրհներգն ի պատիվ հայ օլիմպիական չեմպիոնի, սակայն օլիմպիադայում բրոնզե պարգևն էլ մեծ նվաճում է:

Հայաստանի օլիմպիական հավաքականին առաջին բրոնզե մեդալը պարգևեց հունահռոմեական ոճի ըմբիշ **Ռոման Ամոյանը**: Նա իրավունք ստացավ բրոնզե մեդալը վիճարկել կուբացի Յագներ Էռնանդեսի հետ: Այս գոտեմարտում 55 կգ քաշային հայ ըմբիշն իրեն հիանալի դրսևորեց և հաղթելով 3-0 հաշվով, արժանացավ բրոնզե մեդալի: Երկու օր անց նույնպիսի հաջողության հասավ նաև գերծանրքաշային **Յուրի Պատրիկեևը**՝ բրոնզե մեդալի համար պայքարում 3-1 հաշվով առավելության հասնելով շվեդ Յալմար Սյոբերգի նկատմամբ: Նշենք, որ Պատրիկեևը միակ պարտությունը կրել էր քառորդ եզրափակիչում՝ ապագա օլիմպիական չեմպիոն, կուբացի Լոպեսից:

Սպասելիքները մեծ էին հատկապես մեր ծանրորդներից, որոնք գերազանց էին հանդես եկել Եվրոպայի վերջին առաջնությունում: Ճիշտ է, մեր ծանրորդները հիմնականում արդարացրին իրենց և 3 բրոնզե մեդալ նվաճեցին, սակայն չկարողացան լիովին դրսևորել իրենց ունակությունները, այլապես կարող էին ավելի բարձր տեղ զբաղեցնել: Այսպես, **Տիգրան Գևորգի Մարտիրոսյանն** (69 կգ) ու **Գևորգ Դավթյանը** (77 կգ) վեց մոտեցումներից միայն երկուսի ժամանակ կարողացան բարձրացնել ծանրաձողը, ինչը նրանց միայն բրոնզե մեդալ պարգևեց: Տիգրանը երկամարտում ցույց տվեց 338 կգ (153+185) արդյունք՝ անձնական ավելի ծանր քաշի պատճառով արծաթե մեդալը զիջելով նույնպիսի ցուցանիշի հասած ֆրանսիացի Վենսելաս Դաբայային: Գևորգը երկամարտում ցույց տվեց 360 կգ (165+195) արդյունք, ընդ որում պոկում վարժությունում միայն 3-րդ մոտեցմամբ հաղթահարեց նախնական քաշը, այլապես 0 կստանար: Մինչև 77 կգ քաշային կարգում մեր երկրորդ պատվիրակը՝ **Արա Խաչատրյանն** էլ ընդամենը 2 հաջող փորձ կատարեց և երկամարտի 353 կգ (162+191) արդյունքով գրավեց 7-րդ տեղը: Ավելի վստահ հանդես եկավ **Տիգրան Վարդանի Մարտիրոսյանը** (85 կգ): Նա 5 փորձերից երեքը հաջողությամբ ավարտեց՝ երկամարտում ցույց տալով 380 կգ (177+203) արդյունք: Քաշային այս կարգում հանդես եկած **Էդգար Գևորգյանը** պոկում վարժությունում բավական լավ արդյունքի էր հասել (176 կգ), սակայն հրումում չկարողացավ իրեն ենթարկել 196 կգ-անոց ծանրաձողը և 0 ստացավ:

Կանանց մրցավեճում մեր միակ մասնակիցը **Հռիփսիմե Խուրշուդյանն** էր: Նա վերջին պահին էր օլիմպիադայի մասնակ-

⊃14

13➲

ցության իրավունք ստացել՝ փոխարինելով հիվանդացած **Մելինե Դալուզյանին**: Ուստի Հռիփսիմեից սպասելիքներն առանձնապես մեծ չէին, քանի որ նա լիովին պատրաստ չէր մրցումներին: Թեև Հռիփսիմեն չորս մոտեցում հաջող կատարեց, սակայն երկամարտի արդյունքը՝ 235 կգ (105+130) նրան հնարավորություն ընձեռեց զբաղեցնելու միայն նախավերջին՝ 11-րդ հորիզոնականը:

Հայաստանցի չորս բռնցքամարտիկներից մրցասպարեզում մնացել էր 60 կգ քաշային **Հրաչիկ Ջավախյանը**: Նա քառորդ եզրափակիչում պետք էր մրցեր կորեացի Բայկ Ջոնսուբի հետ: Սակայն հիվանդության պատճառով կորեացին ռինգ դուրս չեկավ և մեր բռնցքամարտիկը մտավ կիսաեզրափակիչ՝ նվազագույնն իր համար ապահովելով բրոնզե մեդալը: Ջավախյանը պայքարը սկսել էր 1/8 եզրափակիչից՝ 12-0 հաշվով առավելության հասնելով նիգերիացի Ռաշիդ Լեյուսելի նկատմամբ:

Կիսաեզրափակիչում Ջավախյանի մրցակիցը 2004 թ. օլիմպիական խաղերի չեմպիոն Ալեքսեյ Տիշչենկոն էր: Բուքմեյքերները մրցամարտից առաջ բացահայտ ֆավորիտ էին համարում ռուս մարզիկին, սակայն հանդիպումը սկսվեց հավասար պայքարում և որոշ ժամանակ Հրաչիկը ոչինչով չէր զիջում հակառակորդին: Հանդիպման ելքը վճռվեց 3-րդ ռաունդում, երբ Ջավախյանը 4:5 հաշվով զիջելիս մրցավարից հերթական զգուշացումը ստացավ, որի համար Տիշչենկոյին լրացուցիչ 2 միավոր գումարեցին: Ունենալով շոշափելի առավելություն՝ ռուս բռնցքամարտիկը մրցամարտը հասցրեց հաղթական ավարտի՝ առավելության հասնելով 10:5 հաշվով:

Անդրանիկ Հակոբյանն (75 կգ) առաջին փուլում հաղթելով գանացի Ահմեդ Սարակուին (14-8), երկրորդում պարտվեց ուզբեկ Էլշոդ Ռասուլովին (0-20) և դուրս մնաց հետագա պայքարից: **Հովհաննես Դանիելյանն** էլ (48 կգ) առաջին մենամարտը շահելով կամերունցի Թոմաս Էսոմբայից (3-9), երկրորդում զիջեց ղազախ Բիրժան Ժակիպովին (7-13): Իսկ ահա **Էդուարդ Համբարձումյանն** (64 կգ) առաջին իսկ մենամարտում պարտվեց Դոմինիկյան Հանրապետության ներկայացուցիչ Ֆելիքս Դիասին (4-11):

Իրենց պայքարն են սկսել ազատ ոճի ըմբիշները: Մեր երկիրն այդ մրցումներում ներկայացնում են երեք ըմբիշներ: Առաջինը մրցագորգ դուրս եկավ 60 կգ քաշային **Մարտին Բերբերյանը**: Նա 0-4 հաշվով պարտություն կրեց Կանադան ներկայացնող ադրբեջանցի Սաիդ Ազարբայջանիից և դուրս մնաց մեդալների համար մղվող պայքարից: Չեմպիոն հռչակվեց ռուսաստանցի Մավլետ Բատիրովը՝ եզրափակիչում 3-1 հաշվով հաղթելով ուկրաինացի Վասիլի Ֆեդորիշինին:

Այսօր մրցագորգ դուրս կգա 66 կգ քաշային ըմբիշ **Սուրեն Մարկոսյանը**: Վաղը մեդալները կխաղարկեն 84 կգ քաշային ըմբիշները, որտեղ Հայաստանը ներկայացնելու է **Հարություն Ենոքյանը**: Վաղը մրցասպարեզ դուրս կգա նաև մեր օլիմպիական հավաքականի վերջին պատվիրակը՝ նիզականետորդ **Մելիք Ջանոյանը**, որից իհարկե մեդալի ակնկալիքներ չկան:

«Օլիմպիադա-2008»-ը ավարտված է: Հայաստանի հավաքականը Պեկինի օլիմպիական խաղերում վաստակեց միանգամից 6 բրոնզե մեդալ:

Աշոտ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Հարցազրույց

Հաղորդավարուհի.- Այսօր մենք հեռուստաստուդիա ենք հրավիրել մեր ֆուտբոլի հավաքականի ավագ մարզիչ Ասլան Ասլանի Ասլանյանին...

Հյուր /զարմացած/.- Բայց ես Ասլան Ասլանյանը չեմ:

Հաղ.- Ոչինչ, կպատահի. շատերն են մեզ մոտ իրենց կորցնում... Երեկ, օրինակ, մենք ցուցադրեցինք Սահակաշվիլու մասին ֆիլմը, մեզ ասացին, որ դա Սահակաշվիլին չէ՝ Ադոլֆ Հիտլերն է... Այսօր կցուցադրենք Հիտլերին՝ Սահակաշվիլու փոխարեն: Մեկ են... Քանի դեռ մեր հյուրը մտորումների մեջ է, ես՝ Նանարիկ Նանարիկյանս, առաջին հարցը կուղղեմ նրան: Ասլան Ասլանիչ, ինչպե՞ս հաջողվեց նվաճել գավաթը:

Հյուր /մարզիչի դերի մեջ մտնելով/.- Դժվարությամբ...

Նանարիկ Նանարիկյան.- Մանրամասն, մանրամասն...

Հյուր.- Դե, գավաթը ձեռք գցեցինք առաջին իսկ խաղում...

Ն.Ն.- Շա՞տ ջանք թափեցիք:

Հյուր.- Ճիշտ այդպես: Մրցավարը հենց ազդարարեց խաղի սկիզբը, մենք նետվեցինք առաջ: Մեզ առաջ մղում էր գավաթի փայլը, որ շողշողում էր արևի տակ, կազմակերպիչների առջև՝ սեղանին: Մինչ հակառակորդ թիմն ուշքի կգար, մինչ մրցավարները, ոստիկանները, կազմակերպիչները, բոլորբոլորը ուշքի կգային, գավաթն արդեն մեր ձեռքում էր...

Ն. Ն. - Հրաշալի է: Եվ ո՞վ առավել աչքի ընկավ:

Հյուր.- Դժվար առանձնացնեմ մեկին: Գրոհը միահամուռ և հախուռն էր, ամեն մեկն իր լուրջ մասնակցությունն ունեցավ այդ բանում... Բայց առավել աչքի ընկավ մեր դարպասապահ Տնաշենյանը, որն այնքան արագ փախավ դաշտից, որ ոչ ոք չնկատեց անգամ նրա բացակայությունը: Նա գավաթը հուսալի տեղ էր թաքցրել, և ոչ ոք չկարողացավ հայտնաբերել: Ու մենք խաղերից հետո մեր երկիր մեզ հետ բերեցինք թանկագին ավարը:

Ն.Ն.- Իսկ ինչպե՞ս ավարտվեց առաջին խաղը:

Հյուր.- Առաջին խաղն ավարտվեց առաջին հարցաքննությամբ: Ուզում էին իմանալ՝ որտե՞ղ ենք թաքցրել գավաթը: Իսկ ո՞վ կասեր: Վերջապես, տեսան որ ընկույզի պես ամուր նյութի հետ գործ ունեն, նոր գավաթ սարքեցին ու խաղերը վերսկսեցին:

Ն.Ն.- Իսկ դա չնվաճեցի՞ք...

Հյուր.- Դժվար էր... նորը հուսալի պահպանում էին ոստիկանական ուժերը:

Ն.Ն.- Ո՞վ բացեց հաշիվը:

Հյուր.- Մինչև վերջին խաղի վերջին րոպեն չգիտեինք, որ գործարարը վերջապես շվեյցարական բանկում թիմի անունով բացել է խոստացած հաշիվը: Երբ իմացանք՝ ոգևորությունն այնքան մեծ էր, որ մնացած մի քանի րոպեներին մենք բաց թողեցինք ընդամենը երկու անկարևոր գնդակ:

Ն.Ն.- Իսկ ձեզ ինչքա՞ն հաջողվեց խփել:

Հյուր.- Գրեթե ամեն խաղին էլ երկուսից-երեք անգամ... Բայց իմացիր՝ ես խոսում եմ այն խփվածների մասին, որոնց դաշտից միայն պատգարակներով էին հեռացնում:

Ն.Ն.- Ուրիշ ինչո՞վ աչքի ընկան մեր տղաները:

Հյուր.- Աշխատասիրությամբ ու էլի աշխատասիրությամբ: Պատկերացնու՞մ ես, սիրելի Նանարիկ, նրանք մի քանի ժամում Փարիզի շուկայում հաջողությամբ վաճառեցին համեմ-կոտեմի բոլոր դաստաները, որ մեզ հետ էինք տարել... Չհաշված, որ արագ վաճառեցին նաև բաստուրմա-սուջուխի բոլոր արկղերը: Եվ պատահական չէ, որ բոլոր տղաներին մեկ առ մեկ գնեցին բրազիլացիները:

Ն.Ն.- Կեցցեն մեր տղաները... Բրազիլացիներին այդպես էլ պետք է: Եթե գաղտնիք չէ, ո՞ր դաշտերում հանդես կգան նրանք:

Հյուր.- Դե, ո՞ր դաշտերում... Սուրճի, կանեփ-կակաչի, էլ ո՞ր դաշտերում... Շատ աշխատասեր են մեր տղաները:

Ն.Ն.- Բա մենք նման հզոր թիմ էլ չե՞նք ունենալու:

Հյուր.- Ինչպե՞ս թե չենք ունենալու: Ունենալու ենք, առավել հզորը... Բա ես մեր կարտոֆիլի, ծիրանի դաշտերում ու այգիներում ինչու՞ եմ գիշեր-ցերեկ շրջում:Հա-վա-քա-գըրում եմ բոլոր աշխատասեր տղաներին...

Ն.Ն.- Ահա, այս լավատեսական նոտայով էլ սկսում ենք մեր գովազդի ժամը: Ուրիշ հեռուստաալիք չմիացնեք, հա՜, մի թողեք, որ ձեզ ուրիշները զվարճացնեն...

Կես ժամ գովազդից հետո

Ն.Ն.- Բարեկամներ, գովազդի ընթացքում մեզ հաջողվեց պարզել, որ ընկերը ամենևին էլ Ասլան Ասլանիչը չէ... Նա ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան Ավագ Ավագի Ավագյանն է: Քիչ անց ձեզ կներկայացնենք ֆուտբոլի հավաքականի ավագ մարզիչ Ասլան Ասլանիչին: Նրա հետ մեր զրույցը կլինի ժամանակակից ժուռնալիստիկայի խնդիրների մասին... Տես, չցվրվե՜ք, հա՜...

Ներքինով բանաստեղծ ու բնությունից գերզգայուն, լավ մարդ

Բանաստեղծուհի, հոգեբան-մանկավարժ ***Լարիսա Մինասյանն*** արդեն բանաստեղծությունների երեք ժողովածուների հեղինակ է: Վերջերս լույս տեսավ Լարիսա Մինասյանի նկարազարդմամբ «Փնտրիր քեզ իմ հոգում» գիրքը, որը բանաստեղծուհու տպագրած նախորդ գրքի տրամաբանական շարունակությունն է: Սույն հոդվածում փորձ եմ անում խոսել՝ ոչ միայն բանաստեղծուհու ստեղծագործական աշխարհընկալման մասին.

Լարիսա Մինասյանի բանաստեղծական ներշնչանքի աղբյուրն են մայրական, սիրո, ընտանիքի, հայուհու կերպարի ընդհանրացված թեմաները:

Լարիսա Մինասյանը ծնունդով Գյումրիից է, ապրում է Երևանում, երեք որդու մայր է, շրջապատված թոռներով, հարսներով, ապրում սիրասուն հուշերով, չփչրվող հույսերով, հավատով ու նաև՝ հումորով: Նրա շուրջը թևածում են երգն ու կատակը, մարդկային ջերմ հարաբերությունները, ժպիտը, որովհետև ինքն իր էությամբ «քայլող» բարություն, քնքշություն ու խիղճ է: Եվ նրան ճանաչողները միշտ ասում են.

«Նա բնությունից պոկված ու պեղված մի թանկարժեք քար է, որը փայլփլանքով պայծառ է դարձնում շուրջ բոլորը. նա իր գեղեցիկ կանաչ-կանաչ աչքերի բարի ցոլանքով նայում է աշխարհի չարին ու բարուն՝ պոետական թափանցիկ, զուլալ հայացքով: Բանաստեղծուհին օրվա մեջ իր խոհերին տրվում է, երբ ասելիքը մուսայի դուռը թակում է, երբ աղմկում են հոգու մեջ հույզերը, դրանք տրամադրության հետ զրուցող ապրումներ են՝ սիրո, ընտանիքի, մայրության, հայրենի եզերքի, իր կենսագրության հետ առնչվող մանրամասներ»...

Այս բոլորն ահա դառնում են սպիտակ թղթի վրա հիանալի քնարական կարճ մեկնաբանումներ, որոնք նույնքան հուզական են, որքան անպաճույճ, իմաստուն ու անկեղծ.

Աշխարհը փշոտ, մռայլ ու մշուշ,
/Ու ամեն քայլիդ՝ ամպրոպ է ու ամպ/
Ինչպե՞ս մնացիր դու այդքան քնքուշ,
Լցված սոսկ երգով, բանաստեղծությամբ...

Լարիսա Մինասյանի բանաստեղծություններին ծանոթ է եղել Սիլվա Կապուտիկյանը, ով իր ամենաջերմ մաղթանքներն է հղել նրան. «Սիրելի Լարիսա, և՛ քո խոսքին, և՛ քո աչքերին հավատում եմ»:

Բնութագրական է նաև Լարիսայի մասին Մետաքսեի խոսքը. «Ներքինով բանաստեղծ ու բնությունից գերզգայուն, լավ մարդ»:

Լարիսա Մինասյան մարդուն, իրոք, այնքան գեղեցիկ բառերով կարելի է բնութագրել, որն առաջին հերթին իր գորովագութ վերաբերմունքը հատկացնում է թույլ ու խեղճին, կարեկցում է նրանց, ովքեր նույնիսկ իր հանդեպ չարակամ են ու հոգի չունեցող:

Լարիսա Մինասյանը նախընտրում է իր ուրույն ոճը. նրա տողերի հետևում ինքն է ու իր աշխարհը՝ ընտանիք, սեր, ծաղիկներ, մանուկներ: Բանաստեղծուհին ընտանիքում



Լարիսա ՄԻՆԱՍՅԱՆ

հայուհուն պատկերացնում է ավանդապահ, խոնարհ, պարկեշտ, դաստիարակի դերում. «Տիեզերքին քիչ մոտ կանգնած, աստղերի հետ միշտ խաղաղ, համեստ»: Դարձյալ կինն այդ ինքն է՝ հենց բանաստեղծուհին, իր հարուստ կյանքի անձնական էջերով: Նրա քնարական հերոսուհին հայելու մեջ /որը ըստ նրա՝ խորհրդանիշն է կանացի ներքին դիմապատկերի ճիշտ արտացոլման/ երևում է իր ողջ հոգեբանությամբ, ողջ նկարագրով. նա մի տեղ փակ վարագույրի ետևում է՝ իր ապրումներով, կարոտով, ուր կա կորուստ, ափսոսանքով տուն կանչող ձայն...

Լարիսա Մինասյանին մտատանջում է մարդու էությունը, նա մարդուն ցանկանում է տեսնել կատարյալ.

Մարդու միջից մարդը հանես,
Ի՞նչ կմնա նրա տակին,
Բան չի մնա՝ միայն նողկանք...

Լարիսա Մինասյանի պոեզիայում կան զվարթ, կատակախառն տողեր, նրա քնարական հերոսուհին նրբանուրբ հոգեկերտված ունի, քնքշանքով լի ժպիտ, բնություն, զարթոնք սիրող հոգի, ուր թովչանքով ծփում են ծյունից ծնված ձնծաղիկներն ու մանուշակները: «Եվ էլ ինչ գարուն, որ չսիրես, որ չտխրես ու չխանդես, խռովքներիդ գիրկը չընկնես, էլ ի՞նչ գարուն, երբ ջահել չես, էլ մի արի, խեղճ գարուն, երբ սեր չկա սրտիդ մեջ»:

Նա սիրող մոր և գարնան լեզվով խոսող բանաստեղծուհի է, ով իր գաղտնիքը պահ է տալիս լացող ուռենուն, առվի կարկաչին, մարդկանց խղճին, նաև՝ ծմռան ցրտին... Լարիսա Մինասյանը արդիական մտածողությամբ, զգացումների հախուռն խառնվածքով, բնական, անկեղծ ներաշխարհով է իր անձնական կյանքի ու առտնին խնդիրների մասին խոսում, որոնք ընթերցողին թվում են՝ ամեն մեկը մի մենախոսություն. «Ես խնդացի, դու չուզեցիր, ես լացեցի՝ չընդունեցիր, ժպիտներս քամուն տվիր»: Կամ՝ «Քո անունից մեղր է հոսում իմ շուրթերից, քո հայացքից, քո հույզերից, մանուշակն ու ձնծաղիկը՝ արթնանում են խորը քնից»:

Հեզությունը, առաքինությունն ընդունող բանաստեղծուհին թախծում է, երբ իրեն հանդիպում է չար, նենգ մի երևույթ, որից ինքը... ճզմվում ու փոքրանում է: Այդտեղ, արդեն կնոջն օգնում է հումորը՝ այն ուրույն հեքիաթը, որը տանում է իրական կյանք, որտեղ կա թախիծ ու սեր, ատելություն, իրարանցումներ: Եվ հետո՝ բախտ, զղջում, երգ, որոնք բանաստեղծուհու գրչի տակ տարաբնույթ օրեր են դառնում. «Օր կա սրտիս սիրտ է տալիս, օր կա՝ սիրտս է հանում տեղից»: Բանաստեղծուհին երբեմն չի գտնում անհայտի լուծումը, որն այրում է իր հոգեխռիվ սիրտը, օրորվում է ես-ի պայքարը մենք-ի դեմ.

Լուռ այրվում եմ ես իմ հրով,
Եվ հառնում եմ ես իմ մոխրից:

Լարիսա Մինասյանի «Փնտրիր քեզ իմ հոգում» գրքույկը բացում ես ու չես ցանկանում այն անմիջապես փակել, քանզի նրա քնարական հերոսուհին քեզ հետ մտերմիկ զրուցում է, շարունակում է իր բարի, մայրական խորհուրդները, որոնցով իմաստնանում են մարդն ու աշխարհը:

Լուսինե ԹՈՓՈՒԶՅԱՆ
Հայաստանի ժուռնալիստների միության անդամ

Լարիսա ՄԻՆԱՍՅԱՆ

ԱՉՔԵՐՍ

Աչքերս այնքան հպարտ են նայել,
Սիրել են, բայց ցույց չեն տվել,
Անտարբեր նայել, սակայն այրել են,
Աչքերիս մեջ թախիծն է պատել
Աչքերս խռովել են մտքերիս գրկում:
Դժգոհ չեն նայել, անզոր են նայել,
Իշխող հայացքով երբեք չեն նայել,
Ներել են ու կարեկցել,
Սոլորվել են մնացել:
Այդքան գերելու, բայց չգերվելու,
Այդքան անքեն նայելուս համար՝
Աչքերս ինձանից վրեժ են լուծել:

➲16

15Э

ԾԵՐԱՑԵԼ ԵՍ

Երբ չի ձգում քեզ ոչինչ,
Իմացի՛ր, որ ծերացել ես:
Ա՜խ, այն ճամփան, որ անցնում էիր սիրով,
Չես էլ ուզում անցնես կողքով,
Այն թուղթը, այն հուշերը,
Որին չես էլ ուզում դիպչել մատով,
Իմացիր՛, որ ծերացել ես:
Երբ զգում ես
Դառնացել է դառը կյանքը,
Իմացի՛ր, որ ծերացել ես:

Երբ սրտիդ մեջ էլ տեղ չկա՝
Ոչ ներելու, ոչ խղճալու,
Իմացի՛ր, որ ծերացել ես:

Երբ չես սպասում առաջվա պես
Գարնան գալուն,
Ու չես լալիս առանց պատճառ,
Իմացի՛ր, որ ծերացել ես:

Երբ զրուցել էլ չես ուզում ինքդ քեզ հետ,
Երբ չես ուզում էլ երազել
Ու սրտիդ մեջ անկյուն փնտրել,
Իմացի՛ր, որ ծերացել ես:

Երբ չես ուզում տանից դուրս գալ,
Ու չես ուզում, որ քեզ նայեն ու հիանան,
Երբ ականջդ էլ չի շոյվում
Ու հայացքդ էլ չի հառնում,
Ա՜խ, իմացի՛ր, որ ծերացել ես...

ՉՆԾԱՂԻԿ

Չնծաղիկը ձյան տակին,
Միտք է անում տխրագին.
- Տեսնես ինձ կնկատե՞ն,
Թե՞ ձյան տակին կթողնեն:
Ինչքա՞ն մնամ ես ցրտին,
Չէ՞ որ, նուրբ եմ, քնքշագին,
Արցունք չունեմ էլ լալու,
Սառել է նա իմ աչքին:
Ինձ նկատե՜ք, ինձ քաղե՜ք,
Չմռան ցրտից ազատեք,
Ինձ տուն տարեք՝ ջերմանամ,
Առանց ձմեռ՝ մահանամ:
Սառնությունն է ինձ պահում,
Բայց ջերմություն եմ ես ուզում:
Չգիտեմ, ի՞նչ եմ ուզում...

ՄՏՈՐՈՒՄ

Գարուն, ինչու՞ ես լռակյաց դարձել,
Հոգուս դռները քեզանով փակել,
Անցնելու համար ճամփա չես թողել:

Ամռան կրակը կարծես պակասել,
Այրելու համար շատ քիչ է դարձել:

Աշնան թախիծը լայն տեղ է գտել,
Ու իր թևերը մինչև վերջ բացել:

ԻՄ ՓՇՐՎԱԾ

Իմ փշրված էությամբ
Եվ քո հպարտ սառնությամբ,
Մենք կանգնել ենք դեմ դիմաց,
Այլընտրանքի՝ ոչ մի հարց:

ԱՅՍ

Այս լայն ու նեղ աշխարհում,
Այս խուլ ու կույր աշխարհում,
Անդրդվելի մարդկանց հետ
Կյանքս է հոսում ջրի պես:

Կպակասի սերս մեծ,
Այս անհաղորդ աշխարհում,
Առանց հոգուս ջերմության
Ցուրտ կլինի սրտերում:

ԱՐԵՎԱԾԱՂԻԿ

Իմ սիրուն ծաղիկ
Դու սիրո վառ ծաղիկ,
Ա՜խ, սիրուց խոնարհվել
Գլուխդ ես կախել:
Արևին թեքված,
Արևից սնված,
Արևով տարված՝
Դու մոռացել ես,
Որ մեջքդ է թեքվել:
Սիրուց այդպես գեղեցկացել
Հազար սրտեր ես դու մտել:
Օ՜, սիրո հզոր ուժից



Չես էլ նկատել, թե
Քեզանով էլ՝ ինչքա՜ն են տարվել:

Ես էլ քեզ պես
Շատ եմ սիրում Արևին:

ՀՈԳՈՒ ՉՄԵՌԸ

Հոգու ձմեռ է,
Եվ ոգու սով է,
Սիրտս փշրվել
Ճամփա է ընկել,
Ճամփեն կորցրել
Չի ուզում գտնել:
Գարուն է ուզում,
Իգուր է ուզում:
Տխուր լալիս է
Աղաչում, խնդրում,
Ոչինչ չի ուզում՝
Իր կյանքն է ուզում:

ՍԻՐՈ ՕՐ

Տղա-աղջիկ՝ սեր ու երազ,
Ամենքը մի գարնան ծաղիկ,
Մի մանուշակ, մի ձնծաղիկ:
Հարսներ սիրուն,
Սեր ու գարուն,
Հարս ու փեսա
Սիրո գարուն,
Վարդեր բացվեն թող Ձեր ճամփին:
Ծաղկազարդին, Վարդավառին
Փնջեր կապեք՝ տաք ձեր յարին:

Лариса МИНАСЯН

«КАРОТ» – АРМЯНСКОЙ БОЛИ ПЕРЕПЛЕТ

Бездонная печаль моя - «карот».
Я вся в ее томительной кручине.
Души моей распластанной полет
Скитальчеству препон давно не чинит.

Пока под сердцем носишь Эту грусть,
Истаиваешь сам, не замечая,
Как точит боль ее незримо грудь,
Слезами путь изгнаний отмечая.

Она змеей тоски вползает в нас,
Скользя по жилам горьким разореньем.

Бездонная печаль - что вырви глаз –
Созвучна всем неслыханным бореньям.

Невестою печалится душа,
Ребенком, что сдержать не может плача...
На родину неровно лишь дыша,
Мы ведаем, как нам она маячит.

И до того в нас кровь оголена,
Беспомощна бессилием настолько,
Что лишь на горизонте ей видна
Диаспора, как нации осколки.

Поставила нас жизнь лицом к лицу-
Себя увидеть в зеркале разлуки.
Не вечность ли ведет сердца к венцу
В нас только вера не зводит руки.

Чем больше мы теряем с виду сил,
Тем громче в нас трубит призыв отчизны...
И до того он ласков и красив,
Что хочется побольше Этой жизни.
Всесильный карот мой
С Новым годом родной.

Перевел с армянского Ашот САГРАТЯН.

А ГОЛУБИ ЛЕТЯТ...



Виктор Ваганян – математик, доцент кафедры высшей математики РУДН (Москва), автор более 200 научных публикаций по математике, философии математики, методике преподавания математики и информатики, истории и лингвистике. Пишет также стихи и рассказы на армянском и русском языках. Предлагаем вашему вниманию некоторые из его русских стихов.

***

Моему сыну

Бродят листья по небу без адреса.
Их забыли деревья и воробьи.
Бродят по небу мечты умерших.
Негде им упасть. Незачем…

Слышишь, Господь?
Ты, кто сотворил Всемирную Гармонию!
Дай листьям упасть в праведный мир!
Дай им слиться с родными могилами
И воскреснуть в саду!
Дай им пожить на деревьях…

Возвращаются души на Небесную Родину.
Мечты, как факелы, горят по пути.
Им некуда идти. Некуда возвращаться.

А голуби летят…

Кто это бегает по ночам по крыше?
Не кошка ли моя умершая?

Кто это лает по ночам печально?
Не собака ли моя умершая?

Не голуби ли мои умершие летят к лучам?
Летят! Блестят!
Жизнь угасла. А голуби летят…

Я догоняю тени голубей!
Я удаляюсь от несуществующих людей…
К кошке, к собаке…
Но в душе моей плачет человек.

Свирель

Я пойду в горы
И посижу на склоне с ягнятами
У костра: я воспламенюсь и засияю,
Ласково и чисто, как радуга,
Как мигание
Светлячка…

Я тёплого молочка попью из ведра
И попрошу пастуха сыграть на свирели
О ветре,
Который нежно гладит, обнимает,
Как незримый ангел, как мать
У колыбели…

Я попрошу сыграть о рассвете,
О лучах освежающих и наступающем дне!
Он будет добрым, как взгляд
Из детства,
Как полёт аиста к новизне и весне…
День будет красивым!
Счастливым он будет!

Я попрошу сыграть мою жизнь
Сначала… по-другому… подобно дню,
Который выйдет
Из-за гор!

- Сыграй, свирель, мою жизнь
По-новому:
Пусть она не ломает больше ноги и крылья!
Пусть мягко побежит по земле,
И пусть следы её зарастут васильками!
Пусть зарастут васильками…

Пусть улетит она счастливо за облака,
И путь золотистый
Пусть потянется за ней!
- Отыграй, свирель, мою жизнь!

***

Я знаю: в моих стихах мотылёк бьётся в кулаке...
Вот я разжал пальцы:
- Улетай, мотылёк, по лучам, по дорогам золотым,
По зарницам прокатись - улетай из мира, улетай!

Я знаю: много боли в моих словах. Но боли - от любви.
Боли по сломанным крыльям мотылька: улетай, мотылёк!
По ресницам прокатись слезинкой - улетай,
унеси мою тоску,
Мою любовь унеси...

Дождь и туман в душе моей... и нет мотылька -
Это сердце моё, как колокол,
Из-под развалин неудавшегося мира
Звенит от удара.

Туманное море

Тусклое, тоскливое, туманное море!
То ты утихаешь, как надежда,
То ревёшь, стучишь по миру,
Как попавшая в капкан пантера…

Затопи, море, последние островки ненависти!
И уведи меня с собой!
Пусть я стану никчемной ракушкой!
Пусть стану песчинкой у твоих ног!
Лишь бы услышать твой прибой…

У моего моря нет берега…
В нём бушует безысходность.

Девятый вал

Ты полюбил море,
Море целиком, как родное и живое существо,
И каждую его каплю – слезинку
На реснице прибоя…

Ты полюбил первый глоток морской воды,
Там, в детстве,
И - тот, последний,
Что оставил тебя в море
Навеки…

В любом мире,
На костре или на виселице,
Тебе будет сниться тюленевая даль
И волна,
Поднявшая тебя на гребень
И передавшая
Вечности.

Ледовитая мечта

Я хочу на неделю быть белым медведем.
Я хочу впитать в себе мудрость ледовитого царства!
Я хочу ходить, спать, мечтать на льду!
Какое блаженство в оледеневшем мире
Чувствовать себя живым и чистым!

Я хочу на недельку быть белым медведем
И согреть свою душу на льду!

Верблюд

Верблюд замер в центре оранжевой плоскости.
Вокруг – ни души. Куда идти? Зачем?
Лишь ветер песочный засыпает уши,
И лучи заката приближают ночь…

Всё. Осталось только немного времени,
Да два горба от Бога…

Умирает верблюд в гордом одиночестве –
- Не подходите! Не тревожьте его!
Он счастлив только теперь, один раз,
В лоне песочной Родины своей!

В роще

Я иду по роще юности моей…
Деревья и кусты кивают, уступают дорогу…
Узнали!
Я останавливаюсь и рисую цветы на кустах:
Пусть будет красивее роща!
Пусть будет красивее мир!
А где-то грохот… я закрываю уши:
Война, война, война…
- Оставьте меня: я не ваш солдат!
Меня окружают ветви и пчёлы…
Я окутан каким-то архаичным, природным блаженством:
Я счастлив почти. Я отдохну немного…
…Я здесь сидел с девчонкой…
Я не помню,
О чём мы говорили и где теперь она?
Я не знаю,
О чём сейчас говорю и где теперь я?
Я лишь ощущаю,
Что моя мистическая роща – мой последний уголок…
Здесь всё красиво! Здесь золотые мечты,
Как осенние листья висят на деревьях.
Они давно повымерли…
Но не сдаются даже посмертно…
Я наслаждаюсь одиночеством уходящей жизни:
Люди разбежались, не высовываясь -
Остались лишь листья-вдовушки,
Но нет слов у них – признаться мне в любви
За то,
Что я создал их воображением духа
И развесил в роще…
А куда мне теперь вернуться? Я уже вернулся…
Но древний, глубинный, какой-то магнитный голос

Из недр Вселенной призывает меня к бою:
- Вставай, брат, и возвращайся на позицию!
Бог рощу твою потом, для тебя, материализует в раю!

***

Куда вы уходите, люди?
Ваши души покидают поле боя
И вразброску, оглядываясь, уходят в небо:
Останови, Господь, эту бойню!

Вас ждут матери, девчонки
И голуби на белых крышах!
А вы сами превратились в голубей - уходите в небо…

Вас ждут нераскрытые книги
И дороги, по которым вам пройти!
Куда же вы уходите, дети?!

Закончится ваш бой - начнётся другой.
Другие мальчишки поднимутся в небо:
Останови, Господь, безумие!

Пусть ребята доживут свои годы:
Останови, Господь, войну!

Ласточка

Ласточка, ласточка!
Зачем ты за весточкой
Пришла?

Пропал мальчишка,
Мальчишка пропал на войне…

В свои одиннадцать лет
Он лежит на дороге
В луже крови…

На поле боя всё тихо.
Трупы побратались и мирно спят.
Но завтра снова вспыхнет бой…

Мальчишка пропал на войне…

Улетай, ласточка, подальше от зла,
Не буди мальчишку касанием крыла!

Ржавый воин

Ржавый воин!
Я очищу тебя и отправлю в бой!
Ты пойдёшь, ржавый воин, убивать?
Я очищу тебя до блеска и отправлю в бой!
Ты пойдёшь убивать себя в другом?

Ржавый воин!
Я очищу и забью тебя как гвоздь
В гроб войны!
Я зарою тебя, и весной
Ты гвоздикой взойдёшь, ржавый воин!

***

Не рисуй, художник, мир сквозь слёзы!
Повремени с чувствами: боль утихнет.
И ты радугой обведёшь этот мир!
Ты радугой обведёшь глаза любимой…
Не рисуй, художник, мир сквозь слёзы!

Этот мир, всё же, стоит того,
Чтобы воспринимать его
Как шутку.

Круги

Александру Блоку

Я бросаю камушки в воду
И не могу понять:



С другом, его Рэм звать, он пес, но лучше многих людей (Ростов-на-Дону, 2005 г.)

Не себя ли бросаю в воду?

Не я ли тону
За вас, сидящих на берегу?

Расходятся круги по воде…
Не вернутся они обратно.
Не вернётся на берег, к людям,
Окаменевшее сердце поэта…

Расходятся мечты по нищему миру…
Поэт оказался не к месту.

Беспамятный мир

Ветер унёс лепесток розы куда-то.
Роза забыла лепесток унесённый.
Лепесток забыл розу, сад и землю свою.
Ветер забыл, что унёс лепесток куда-то.

Беспамятный мир!
Все забыли друг друга, корни свои и ветви –
Живут без прошлого и будущего.
Ветер унёс мир куда-то…

В этом беспредельном космическом склерозе
Сидит на краю, на самом краю Вселенной
Забытый всеми поэт
И пишет.

Беспамятный мир!
Прочти эту чушь! Всё равно всё свернётся
в пыль и мрак –
Прочти поэта бред!
Быть может, там найдёшь зубы своих предков,
Выбитые временем и войной,
Быть может, тебе нужны зубы предков…

Ветер забыл, что унёс лепесток куда-то.
Лепесток забыл, что ветер унёс его куда-то.
Поэт забыл, что бред его унёс куда-то,
Откуда он не вернётся и не надо.

***

Лети, голубь, лети…
Тебя любил мальчик…
Его пуля увела.

Из родительских слёз
Могильный холмик вырос.
Достигает он Бога,
Упирается в его рассудок,
Давит на него,
Как жизнь,
Как агония…

Нет в этом мире твоего друга, голубь!
Он теперь бегает в другом мире,
За другими голубями…

Лети, сиротка, лети,
Влетай в глаз судьбе.

***

Василию Боровских -
Моему Небесному другу

Я ищу вас,
Но лишь спотыкаюсь
О камни ваших могил…

Нахожу ваши следы - радуюсь до слёз.
Неужто мы больше не встретимся на Земле?

Я живу за вас.
Я живу под грузом ваших задач.
Мне ничего не решить в этом мире.
Я с позором рухну на землю…

Где-то заплачет моя дочь
О том, что продолжается жизнь…

***

Прости меня, Господь,
За то, что не вписался
В рамки Твоих карикатур
И что просрочил жизнь…

Прости, что в Твоём доме
Я страдал от Твоего отсутствия,
А Ты - от моего присутствия…

И за то прости, что не переплыл
Реку самообмана
И утонул… на берегу.

***

Не сдавайся, человек:
За спиной мощнейший мир!
Он горой стоит за тобой.
Не сдавайся,
Когда всё потеряно, всё сломано –
Найди смысл,
Найди силы – вдохнуть жизнь
В свою душу озябшую,
И тихо, с надеждой, взгляни на небо.
Там, за облаками, притаилось Солнце:
Оно взойдёт!
Не сдавайся,
Когда жизнь твоя превратилась в бессмыслицу
И страданье – вспомни собратьев,
Выбравших мученическую долю и распятие
За Правду – не сдавайся!
Во всей этой пустоте цвета крови
Есть нераскрытый смысл,
И он раскроется тебе
В обличии красных роз на синих небесах…
Не сдавайся, человек:
За тобой невидимый Бог!

***

Там, за окном,
Сияют листья о том,
Что придёт Весна потом…
Одноногая, быть может, одноглазая,
Пьяная, безносая…

Вспыхнет Весна от смущения как стократное лето!
А мы, спотыкаясь от изумления, соберёмся вокруг
И бросим минуты свои, как хворост, в огонь…

Звучи, амшенская зурна...

Восьмой раз в Краснодарском крае стартует фестиваль культуры амшенских армян «Звучи, амшенская зурна». Он посвящён памяти легендарного зурначи Вартана Зебеляна. От Краснодара до Сухуми амшены старшего поколения помнят этого неповторимого музыканта. В его руках зурна плакала и ликовала, никого не оставляя равнодушным.

Традиционно фестиваль проходит в местах компактного проживания амшенских армян, и на этот раз апшеронская земля гостеприимно приняла почти двести участников творческих национальных коллективов.

Прекрасная природа окунула всех в атмосферу большого праздника.

Впервые участников фестиваля, прибывших из республик Абхазия, Адыгея, многих регионов Краснодарского края, приветствовали представители власти: заместитель Главы Апшеронского района Кротенка Светлана Викторовна, Глава Черниговского поселения Симонцов Геннадий Николаевич. Своё доброе напутствие участникам фестиваля сказали: председатель краевой организации САР Геворкян Р. А., основатель и бывший директор Черниговской средней школы, почётный житель Туапсинского района Мадилян Е. В., председатель научного Центра Талмуждян А., директор армянского культурно-образовательного Центра «Хачкар». С радостью встретили зрители и участники фестиваля выступление председателя Совета армянского общества Республики Абхазия Казаряна Г. С.

28 мая, в национальный праздник Армении День первой республики, в селе Черниговское зазвучали зурна и доул, и начался фейерверк песен, танцев мелодий одного из древнейших на земле народов.

Фестиваль открыл его вдохновитель и организатор, член Союзов писателей Армении и России, Крикор Мазлумян. Его перу принадлежит сборник стихов «Песнь об Амшене», который переведён на армянский язык и, вскоре, в Ереване состоится презентация этой удивительной книги.

Поэтическое произведение, прозвучавшее на фестивале, так и называлось «Звучи, амшенская зурна»:

Звучи, амшенская зурна,
Пусть целый мир тебя услышит!
Пока не замолчит она,
Амшен ещё живёт и дышит…

Фольклорный ансамбль «Шерам» (Краснодар), ансамбль танцев народов Кавказа «Эдельвейс» (Армавир), ансамбль танца «Арин-Берд» (Краснодар), ансамбли «Амшен», «Наири», «Севан» (Лазаревский Центр армянской культуры), Анна Мосинян (культурно-образовательный центр «Нарек», г. Краснодар), участники 1-ого фестиваля 1989 года – ансамбль «Еразанк» (Адыгея), сменяя друг друга, вызывали восторг зрителей.

Великолепие костюмов, народных песен, танцев, мелодий торжествовали в этот день на сельской сцене. И главное – настроение и любовь, которыми дышал каждый концертный номер.

Солисты вокальных ансамблей «Дзовашунч» (Абхазия) и «Дехцаник» (Лазаревский Центр армянской культуры) покорили всех своим обаянием, вкусом, профессионализмом, высокой сценической культурой.

Открытием фестиваля стала выступление фольклорного ансамбля «Фуртуна» (Апшеронский район, руководитель Сергей Сарьян). Спасибо участникам ансамбля за любовь к народной культуре, за их благородное стремление сохранить крупицы творчества своих предков.

Спартак Сагарьян, известный далеко за пределами Краснодарского края, как пропагандист народной амшенской культуры, не один раз приглашался на сцену. Его искусство игры на каманче, как всегда, покоряет, никого не оставляя равнодушным.

Как из небытия вдруг явился ученик самого Вартана Зебеляна – Борис Челоян. И вновь звучала зурна, приглашая на праздник всех тех, в ком живут мелодии древнего Амшена, дошедшие до нас через века.

Народный танец амшенских армян «Тертерук» - визитная карточка и украшение фестиваля. В исполнении мужчин ансамбля «Еразанк» он всегда вызывает шквал аплодисментов и желание присоединиться к танцорам. Так получилось и в этот раз. Вместе с артистами, средний возраст которых за 60 лет, танец продолжили парни ансамбля «Амшен».

Зрители, попавшие на фестиваль, смогли насладиться танцами многих регионов исторической Армении. И вставали перед глазами образы Вана и Васпуракана, Амшена, Сюника и Арцаха. Знаменитое армянское «Шалахо» сменялось призывным «Кочари», лирический «Крукнер» уступал место развесёлому «Кинто», а героический «Арцах» – народным «Попурри».

Неожиданным подарком фестивалю стал «Аварский танец» ансамбля «Эдельвейс», абхазские песни солистов ансамбля «Дзовашунч». Великолепно выступили и хозяева – апшеронцы, солистки Вероника Карартуньян и Лариса Булавинова.

Набегавшие тучи не раз пытались испугать зрителей и артистов, но радость долгожданного праздника была столь велика, что вновь и вновь угоняла их за величественные горы, стоявшие, как стража нашего фестиваля.

Т. К. КУНДАКЧЯН,
директор Центра армянской культуры,
Заслуженный работник культуры Кубани.

Крикор МАЗЛУМЯН

ПАМЯТЬ

Должна ли нести наказанье змея
За яд свой, таящийся в жале?
А. Кочконян

Я не свидетель геноцида,
Не я замучен был в песках…
И может быть, мне прах Гамида
Тревожить незачем в стихах.

Не видел я, как загоняли в церкви,
Сжигали в них безвинный мой народ,
Не я стоял у турка под прицелом,
Не пил я в жажде их кровавых вод.

Сын за отца, конечно, не ответчик,
Как вождь народов верно говорил…
Но кто тогда, скажите, кто ответит
За тех, кто без креста и без могил

Лежат в земле, прикладами добиты,
И нет над ними плачущей стены…
Вина змеи не в том, что ядовита,
А в том, что убивала без вины…

Покрытое костями, дышит поле,
Отмытая слезами – плачет даль…
Ты думаешь, я всё это не помню?
О как ты ошибаешься, Кемаль!

Не может оставаться без ответа
Такая боль. Вселенская беда…
Когда-нибудь змее зачтётся это.
И ей не жить без Божьего суда.

***

«Я вскинул руки для объятия
И оказался на кресте…»
Н. Зиновьев

Кавказ - мой дом. Мне все кавказцы - братья.
И да хранит Господь наш общий дом,
Пусть скинутые руки для объятья
Не станут для кого-нибудь крестом.

Я гордого приветствую аварца,
К гортанной речи я твоей привык…
И дай мне бог с тобой не расставаться,
Двенадцатиплеменный мой адыг.

И друг мой непокорный, поседевший
Не только лишь от прожитых годов,
Чеченец буйный, словно Терек вешний,
Я и тебя приветствовать готов.

Абхазец мудрый! О тебе ли слово
Великой дружбы в сердце не найду?
Оно открыто и всегда готово
С тобой делить и радость и беду.

Ингуш, лезгин… Да разве перечислить
Всех вас: калмык и верный осетин!
Весь с вами я: душа моя и мысли...
Богат я в мире тем, что не один.

Кавказ - наш дом.
Мне все кавказцы - братья,
И дом у нас, и Бог у нас един.
А вскинутые руки для объятья -
Знак мужества для истинных мужчин.

март 2008 г.

***

Не уходите, старики,
Не уходите, ради Бога…
Зовут последние звонки
Не вас в последнюю дорогу.

Пока на дальнем рубеже
Стоите, гордые, как прежде,
Царит покой в моей душе,
И в ней жива ещё надежда.

Не уходите, старики,
Смотрите, как прекрасны горы…
Ещё горят, как васильки,
Неугасающие взоры.

Не уходите, старики,
Ещё огонь хранят ладони.
Взгляните: в поле у реки
Вновь ржут стреноженные кони.

Не уходите, старики,
Стихов моих не лгут вам строки:
Не снег ложится на виски,
То признак мудрости высокой-
Не уходите, старики!..

июнь 2008 г.

ПОЭТИЧЕСКИЕ ПИСЬМА НА РОДИНУ

В Ереване был представлен новый сборник «Песнь об Амшене» сочинского поэта Крикора Мазлумяна

